Ճանաչի՛ր ինքդ քեզ

# կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 24.01.2024թ. չորեքշաբթի թիվ 3-4 (1132-1133)

Պարույր ՍԵՎԱԿ

## Որդուս

Ինձ հետ լինի, թե առանց ինձ, իմ բալի՛կս, կմեծանաս,
Իմ օգնությամբ, թե առանց ինձ, դու երբեւէ կհասկանաս,
Թե ոնց պիտի ապրել կյանքում, թե ոնց պիտի նայել կյանքին,
Թե աշխարհում ինչն է էժան, թե աշխարհում ինչն է անգին:
Ինքս էլ խրատ կարդացողին ո՛չ հարգում եմ, ո՛չ հանդուրժում,
Տափակ թե սուր քարոզներից ինքս էլ եմ միշտ, տղա՛ս, խորշում:

Ու թե հիմա, իմ բալի՛կս, ես քո գլխին ճառ եմ կարդում,
Ապա միայն նրա համար, որ շատ հաճախ կյանքում մարդու
Եթե իր մեծ բաժինն ունի ժամանակը, ինքը դարը,
Բայց եւ այնպես քիչ չի ազդում նաեւ ընտրած ճանապարհը:
Գուցե քեզ հետ նույնը լինի, որ պատել է հաճախ ինձ է՛լ.
Հաճախ շուրջս աչք ածելով, այն մարդկանց եմ ես նախանձել,

Որոնց կյանքը հեշտ է անցնում – ասես կյա՜նք չէ, այլ խճուղի՝
Անխոչընդո՜տ եւ անարգելք, քանոնի պես հա՜րթ ու ուղիղ.
Դպրոց, հետո ինչ-որ մի ԲՈՒՀ, մի ազդեցիկ զանգահարող,–
Եվ տաք տեղն է ապահովված...
Այդպես ապրել դու չե՜ս կարող:
Չէի ուզի, որ քո կյանքը հարթ խճուղու նման լիներ:
Դու մի՛ անցիր ասֆալտ ճամփով, գերադասի՛ր ճամփա շինել:

*

Դու սիրո հետ միշտ հաշտ ապրիր, բայց խույս մի՛ տա տառապանքից.
Նա սրբում է աչքը փոշուց, նա մաքրում է հոգին ժանգից:
Տառապանքից չեն մեռնում, չէ՛, այլ ավելի են պնդանում,–
Ապաքինված սիրտը հետո գալիք ցավը հեշտ է տանում:
Ա՜խ, մի՛ նվա: Հայրդ երբեք չի հանդուրժում նվացողին...
Շատ ավելի լավ է, տղա՛ս, դառն արցունքով աչքըդ ցողիր
Ու քո ճամփան շարունակիր: Թո՛ղ որ լինի նա քարքարոտ,
Բայց քո հոգում եթե լինի բարո՛ւ, լավի՛, սիրո՛ կարոտ,
Դու չե՜ս հոգնի, դու կքայլես. կբարձրանաս դու սարն ի վեր:
Դրա համար ոգի է պետք, դրա համար պետք չեն թեւեր:

*

Ազնի՛վ եղիր ամեն ինչում – ո՞վ է կայնքում սովից մեռել:
Ճշտի համար աքսոր չկա – ստի հանդեպ ինչու լռել:
Իսկ մեր շուրջը դեռ կան մարդիկ, որ երբ պետք է, մեջք են ծռում,
Երբ որ պետք է, հռհռում են, պե՞տք է՝ ժպտո՛ւմ, պե՞տք է՝ լռո՛ւմ,
Պե՛տք է՝ իրենց մատն են տնկում... Դու մի՛ եղիր կյանքում տհաս՝
Դու հասկացի՛ր հենց այս գլխից, մի՛ մոռացիր երբեք, տղա՛ս.
Ազնըվությունն այն է միայն, որ չի փոխվում՝ ոնց էլ խուռ տաս,–
Նա մի ճերմակ երես ունի, ոչ թե յոթ-ութ գունեղ աստառ...

*

Մի՛ տրտնջա: Դու հիշո՞ւմ ես. *«Չախորդ օրեր... կուգան-կերթան»*...
Մի՛ տրտնջա: Եթե լավից ետ ես ընկել՝ ինքդ հասիր...
Մի՛ տրտնջա, բայց եւ կյանքը գրքի նման դու մի՛ կարդա,
Գրքի նման՝ քեզնից հեռու, ինչ-որ օտար մարդկանց մասին...
Հպա՛րտ եղիր, բայց ոչ գոռոզ (դատարկ մարդն է գոռոզանում,
Հայրդ խելոք ու տխմարին դրանով էր զանազանում):
Հորդ նման հպա՛րտ զգա, որ ոչ մեկի տուն չես քանդել,
Ոչ մի ազնիվ խոսք չես կտրել, ոչ մի ազնիվ միտք չես բանտել,
Որ շիտակ ես քայլել կյանքում եւ լռել ես եթե հաճախ,
Ապա միայն նրա համար, որ առեւտուրը մանարծախ
Հաճախ միայն զիզի-բիզի զանգուլակ է նետել շուկա,
Իսկ դու զուրկ ես զիզի-բիզուց, կեղծ դրամ էլ մոտըդ չկա...

*

Դու փոքր ես դեռ, դեռ չգիտես, թե ոնց պիտի կյանքին նայել:
Դու փոքր ես դեռ: Երբ մեծանաս, դառնաս արդեն հասուն ջահել,
Խորհուրդներն իմ ե՛ւ հնացած, ե՛ւ ավելորդ թվան գուցե –
Կյանքում այնժամ էլ չլինեն նման բացեր, նման խոցեր:
Է՛հ, տա Աստված: Ես էլ կյանքում ուրիշ ոչինչ չեմ երազում
(Կույրը, տղա՛ս, ինչպես գիտես, երկու աչք է միայն ուզում):
Խորհուրդներն իմ թող հնանան... Ծաղիկն է լոկ այդպես մեռնում,
Երբ ամռանը ծառի վրա հասուն միրգ է արդեն դառնում:
Հանուն գալիք վառ խարույկի ես պատրաստ եմ այսօր ծխալ,
Հանուն վաղվա ճշմատության թող որ այսօր լինեմ սխալ...









Սուրբ Սարգիս

## Սիրո մե՛ր հովանավորը



Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին **Սուրբ Սարգիս** զորավարի տոնն այս տարի նշում է **հունվարի 27-ին**: Արդեն ավանդաբար, տարեցտարի ավելի ընդգրկուն ծրագրով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, ի մասնավորի՝ Արարատյան Հայրապետական թեմը, կրկին հայ երիտասարդներին հրավիրում են մասնակցելու Սիրո մե՛ր հովանավորի տոնին՝ մայրաքաղաքի եւ հանրապետության այլ բնակավայրերի մի քանի դիտարժան վայրերում, թանգարաններում, դպրոցներում, զորամասերում եւ այլ կրթամշակութային հաստատություններում:

**տե՛ս՝ նաեւ էջ 11**

Պարույր Սեւակ - 100

## Եղիցի՛ լույս...

*Թողություն տուր, Տե՛ր, ծանըր խավարին,*
*Միայն թե թող Նա թողնի հեռանա...*
Պարույր ՍԵՎԱԿ



Այսօր Պարույր Սեւակի ծննդյան օրն է. նա դարձավ 100 տարեկան... Մեծ բանաստեղծ, տաղանդաշատ գրականագետ, թարգմանիչ... որ ստեղծեց իր դպրոցը, ունեցավ հարյուրավոր հետեւորդներ... Նա մնաց մեր ժողովրդի հիշողության մեջ՝ որպես մեծ երեւույթ, որ մեր ինքնության *«լուսավորության նախարարն»* էր, մեր հոգեւոր ազատության *«առողջության»* գրավականը, *«սարքովի ճշմարտություններից»* մեզ ձերբազատողը, խավարի ու ստրկամտության դեմ մեր *«շանթն ու շանթարգելը»*... Սակայն, ինչո՞ւ թվարկել... իր եղերական մահով անգամ առավել ընգծվեց նրա երեւելի կերպարն ու նկարագիրը, դերն ու նշանակությունը մեր մշակույթի պատմության մեջ. որպես բանաստեղծ, որ ավելին էր, քան իր թողած ժառանգությունը, պարզապես՝ որպես մի մնայուն երեւույթ՝ Պարույր Սեւակ անունով:

**Գ. Մ.**

**տե՛ս՝ նաեւ էջ 12-13**

*«Մխիթար Սեբաստացի»*

## Վարչապետի մասնակցությամբ

ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** Երեւանի *«Մխիթար Սեբաստացի»* կրթահամալիրում ներկա է գտնվել կրթահամալիրի ավագ դպրոցի սովորողների հետազոտական աշխատանքների պաշտպանությանը:



Կրթահամալիրի ավագ դպրոց-հետազոտական վարժարանում սովորողի հետազոտական նախագիծը որոշված է հանրակրթության պետական չափորոշչով, հեղինակային կրթական ծրագրի ուսումնական պլանով: 2023-2024 ուսումնական տարվա հետազոտական աշխատանքների պաշտպանությունն սկսվել է 2024թ. հունվարի ճամբարում, շարունակվում է մինչեւ ուսումնական տարվա ավարտը (շաբաթական մեկ խումբ՝ ըստ սովորողների պատրաստության):

Հետազոտական աշխատանքով ներկայացել էր սովորողների երկրորդ խումբը: ՀՀ վարչապետը պաշտպանությանը ներկա էր նրանցից մեկի՝ 10-րդ դասարանում սովորող **Դավիթ Մուրադյանի** հրավերով: Դավթի հետազոտական աշխատանքի թեման էր՝ *«Ոչ վերբալ հաղորդակցությունը քաղաքականության մեջ»:* Այնուհետեւ իրենց հետազոտական աշխատանքներն են ներկայացրել նաեւ այլ աշակերտներ:

Վարչապետը շնորհակալություն է հայտնել եւ նշել, որ նմանօրինակ հետազոտական աշխատանքները հետաքրքիր են: Նիկոլ Փաշինյանի խոսքով՝ հանրակրթության նոր չափորոշչով արդեն պարտադիր պայման է դպրոցներում հետազոտական աշխատանքների իրականացումը որպես կրթական պրոցեսի մաս: *«Այսօր համոզվեցինք, որ դա ճիշտ որոշում է եւ պետք է հետազոտական բաղադրիչը կարեւորել: Ընդհանրապես, կարծում ենք, եւ դա կրթության ոլորտի մեր բարեփոխումների կարեւորագույն սեգմենտն է, որ կրթությունը եւ հետազոտությունը սերտորեն փոխկապակցված են: Այն, ինչ լսեցինք եւ տեսանք՝ ակնհայտորեն օգտակար է: Նախ, ինչո՞վ ենք մենք հետաքրքրված նման հանդիպումներով եւ քննարկումներով, որովհետեւ անընդհատ խոսում ենք, որ մեր կայացրած որոշումների հետեւից պետք է գնանք եւ տեսնենք՝ դրանք ինչպես են արտահայտվում եւ գուցե լավարկելու, փոխելու անհրաժեշտություն ունենանք: Նաեւ դա է պատճառը, որ հետաքրքրված ենք նման լսարաններում ներկա գտնվելու հարցում»*,- ասել է վարչապետը:

Այց Արմավիրի մարզ

# Պետբյուջեից ֆինանսավորվող ծրագրերում որեւէ թերություն անընդունելի է

Վարչապետ **Նիկոլ Փաշինյանն** այցելել է Արմավիրի մարզ եւ ծանոթացել Կառավարության ֆինանսավորմամբ համայնքներում իրականացվող ծրագրերի ընթացքին:

Նիկոլ Փաշինյանի առաջին կանգառը եղել է 348 աշակերտ ունեցող՝ Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոցում, որտեղ կառուցվել է նոր մարզադահլիճ եւ հանդիսությունների նոր դահլիճ: Նշվել է, որ շինարարական աշխատանքներն սկսվել են 2022թ. ապրիլի վերջին, ավարտվել 2023թ. տարեվերջին: Մարզադահլիճի մակերեսը 345 քմ է, իսկ հանդիսությունների դահլիճի մակերեսը՝ 230 քմ: Ծրագրի ընդհանուր արժեքը գրեթե 375 միլիոն դրամ է: Վարչապետ Փաշինյանն արձանագրել է մի շարք թերություններ եւ խնդիրներ՝ ընդգծելով, որ դրանց վերացման ուղղությամբ պետք է ցուցաբերել հետեւողական ու խիստ մոտեցում:



Այնուհետեւ, Կառավարության ղեկավարն այցելել է 667 աշակերտ ունեցող Վաղարշապատի Ե. Օտյանի անվան N7 հիմնական դպրոց, որտեղ կառուցվել է մարզադահլիճ եւ հանդիսությունների դահլիճ: Ընդգծվել է, որ շինարարական աշխատանքները մեկնարկել են 2022թ. ապրիլի վերջին, ավարտվել 2023թ. տարեվերջին: Ծրագիրը ներառում է մարզադահլիճի եւ հանդիսությունների դահլիճի կառուցում, բարեկարգում: Մարզադահլիճի մակերեսը 360 քմ է, հանդիսությունների դահլիճի մակերեսը՝ 230 քմ: Ծրագրի ընդհանուր արժեքն ավելի քան 290 մլն դրամ է: Պատասխանատուների ներկայացմամբ, մարզադահլիճը դպրոցի շահագործման ամբողջ ընթացքում չի վերանորոգվել, 2009 թվականից վթարային վիճակում էր, իսկ 2018 թվականից չի շահագործվել:

Հաջորդիվ՝ վարչապետն այցելել է Վաղարշապատ համայնք: Վաղարշապատ համայնքի աղբահանության եւ սանիտարական մաքրման աշխատանքները պատշաճ կազմակերպելու նպատակով կառավարության ֆինանսավորմամբ ձեռք են բերվել ինքնաթափ, աղբատար մեքենաներ եւ աղբամաններ: Ծրագրի ընդհանուր արժեքը շուրջ 476 միլիոն դրամ է: Ընդհանուր առմամբ, համայնքը համալրվել է 7 աղբաթափ մեքենայով (346.500.000 դրամ), 1 ինքնաթափ մեքենայով (36.000.000 դրամ) եւ 1200 աղբամանով (93.600.000 դրամ):

Կառավարության ղեկավարի հաջորդ կանգառը եղել է 195 աշակերտ ունեցող՝ Արտիմետի միջնակարգ դպրոցում, որտեղ կառուցվել է նոր մարզադահլիճ: Շինարարական աշխատանքներն սկսվել են 2022թ. ապրիլի վերջին: Ծրագրի ընդհանուր արժեքն ավելի քան 198 միլիոն դրամ է, միջոցները հատկացվել են կառավարության կողմից: Վարչապետը հանձնարարել է սեղմ ժամկետներում լուծում տալ բոլոր թերություններին ու խնդիրներին եւ ընդգծել, որ ծրագրերի պատշաճ իրականացման վերահսկողությունը պետք է լինի ե՛ւ նախարարությունների, ե՛ւ Քաղաքաշինության կոմիտեի, ե՛ւ մարզպետարանի կողմից:

Մարզային այցի շրջանակում Նիկոլ Փաշինյանը ծանոթացել է Արաքս համայնքապետարանի շենքի վերանորոգման եւ GIZ-ի (Գերմանական միջազգային համագործակցության ընկերության) կողմից 1-ին հարկում Քաղաքացիների սպասարկման գրասենյակի հիմնման աշխատանքներին: Պատասխանատուների ներկայացմամբ, համայնքապետարանի շենքն ավարտական փուլում է, իսկ ՔՍԳ-ի աշխատանքներն ավարտված են: Ծրագրի ընդհանուր արժեքը 55.3 մլն դրամ է: Ծրագիրն իրականացվել է Հայաստանի կառավարության, Արաքսի համայնքապետարանի, GIZ եւ Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության համաֆինանսավորմամբ:

Մարզային այցի շրջանակում կառավարության ղեկավարի վերջին կանգառը եղել է Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոցում, որտեղ կառուցվել է նոր մարզադահլիճ եւ հանդիսությունների դահլիճ: Շինարարական աշխատանքներն սկսվել էին 2022թ. ապրիլից: Մարզադահլիճի մակերեսը 360 քմ է, իսկ հանդիսությունների դահլիճի մակերեսը՝ 220 քմ: Ծրագրի ընդհանուր արժեքը 326 միլիոն դրամ է, որը հատկացվել է պետական բյուջեից: Անդրադառնալով այստեղ եւս առկա թերություններին՝ վարչապետ Փաշինյանը շեշտել է, որ պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերում որեւէ թերություն անընդունելի է, նման ծրագրերը չեն կարող համարվել ավարտված:

Այցի ընթացքում վարչապետ Փաշինյանը հարգանքի տուրք է մատուցել հանուն հայրենիքի կյանքը նվիրաբերած հերոսների հիշատակին:

Այց Լոռու մարզ

# Վարչապետը ծանոթացել է շենքային եւ գույքային պայմաններին

ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանն** ու ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանն** այցելել են Լոռու մարզ եւ ծանոթացել Կառավարության ֆինանսավորմամբ համայնքներում իրականացվող ծրագրերի ընթացքին:

Առաջին կանգառը եղել է Վարդաբլուրի միջնակարգ դպրոցում, որտեղ կառուցվել է նոր մարզադահլիճ: Ծրագրի նպատակով Կառավարությունը հատկացրել է ավելի քան 237 մլն դրամ: Շինարարական աշխատանքները մեկնարկել էին 2022 թ. մայիսին:

Հաջորդիվ վարչապետը ծանոթացել է Ստեփանավանի N1 վարժարանի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքներին, որի համար հատկացվել է ավելի քան 173 մլն դրամ: Շրջայցի ընթացքում վարչապետն արձանագրել է տարբեր խնդիրներ եւ պատասխանատուներին հանձնարարել դրանք շտկել սեղմ ժամկետներում:

Կառավարության ղեկավարն այնուհետեւ այցելել է Մեդովկա բնակավայր, որտեղ շրջայցի ընթացքում ծանոթացել է նոր կառուցված մոդուլային հիմնական դպրոցում իրականացված աշխատանքներին: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը կարեւորել է որակի ապահովումը թե՛ շենքային, թե՛ գույքային առումով: Նշենք՝ դպրոցում սովորում է ավելի քան 50 աշակերտ, սակայն այն նախատեսված է 144 աշակերտի համար: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2020 թ. նոյեմբերին:

Նիկոլ Փաշինյանը եղել է նաեւ Հագվի բնակավայրում, որտեղ եւս կառուցվել է հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենք: 144 տեղ հզորությամբ դպրոցի կառուցման արժեքը կազմել է ավելի քան 780 մլն դրամ: Շինարարական աշխատանքները սկսվել են 2020 թ. նոյեմբերին: Դպրոցն ունի կահավորված խաղահրապարակ, արեւային ֆոտովոլտային կայան: Իրականացվել են նաեւ բարեկարգման եւ ցանկապատման աշխատանքներ:

Վարչապետը շնորհավորել է աշակերտներին եւ ուսուցիչներին՝ նոր դպրոցի կառուցման առիթով: Նիկոլ Փաշինյանը նշել է, որ աշակերտները կհաճախեն նորակառույց դպրոց, բայց Կառավարությունը չի համարի, որ աշխատանքներն ավարտել են:

Նրա խոսքով՝ այժմ տեսչական ստուգումներ են իրականացվում, եւ տեսանելի է, որ դպրոցներում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման առումով խնդիրներ կան: Վարչապետի գնահատմամբ՝ դա կապված է նաեւ շենքային պայմանների հետ: Այս համատեքստում Նիկոլ Փաշինյանը կարեւորել է նոր կառուցվող կրթական հաստատություններում քաղաքաշինական աշխատանքների եւ ձեռք բերվող նոր գույքի որակը՝ շեշտելով կրթական պատշաճ միջավայրի ապահովման առաջնահերթությունը: Վարչապետը հանձնարարական է տվել՝ լինել հետեւողական եւ բոլոր խնդիրներին տալ համապատասխան լուծում՝ ընդգծելով, որ պետությունը ներդրումներ է կատարում եւ պահանջում է որակյալ աշխատանք:

Կառավարության ղեկավարը ծանոթացել է նաեւ Վանաձորի Ղեւոնդ Ալիշանի անվան N 27 եւ Օովակալ Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոցների նոր մարզադահլիճների պայմաններին: Շինարարական աշխատանքները մեկնարկել էին 2022 թ. հունիսին: N 27 դպրոցի մարզադահլիճի կառուցման արժեքը կազմել է 83 մլն դրամ, իսկ թիվ 23 դպրոցի մարզադահլիճի համար պետբյուջեից հատկացվել է 251 մլն 802 հազար դրամ:

Այցի շրջանակում վարչապետը Վանաձորում ծաղիկներ է խոնարհել հանուն հայրենիքի կյանքը նվիրաբերած հերոսների հիշատակին նվիրված հուշարձանի մոտ:

Սերգեյ Փարաջանով - 100

# Ֆրանսիայում մեկնարկել են հոբելյանական միջոցառումները

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ Լիոնի մերձակա Դեսին քաղաքի Տոբոգան թատրոնում հունվարի 19-ին կայացել է *«Նռան գույնը»* պարային ներկայացման առաջնախաղը: Հայ-ֆրանսիական այս նախագծով Ֆրանսիայում մեկնարկել են Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին նվիրված միջոցառումները:

Առաջնախաղին ներկա են եղել ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Դանիել Դանիելյանը,** Ռոնից ընտրված սենատոր, Ֆրանսիայի սենատի Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի նախագահ **Ժիլբեր-Լյուկ Դըվինազը,** Ռոնից ընտրված պատգամավոր **Սառա Տանզիլին,** Օվերն-Ռոն-Ալպեր շրջանի փոխնախագահներ, Դեսինի քաղաքապետ Լորանս Ֆոթրան եւ Վալանսի քաղաքապետ **Նիկոլա Դարագոնը,** Լիոնի մետրոպոլիայի փոխնախագահ **Հելեն Դյուվիվիե-Դրոմենը,** Լիոնի փոխքաղաքապետ **Սոնյա Զդորովցովը,** Լիոնի նախկին քաղաքապետ, քաղաքային խորհրդի անդամ **Ժորժ Կեպենեկյանը,** Ֆրանսիայի հայկական խոշոր կազմակերպությունների Լիոնի մասնաճյուղերի ղեկավարները, թատերական միությունների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ողջույնի խոսքով հանդես են եկել ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը, Տոբոգան թատրոնի տնօրեն Ռաֆայել Ռիմսկի-Կորսակովը, ՕՌԱ շրջանի փոխնախագահ, Դեսինի քաղաքապետ **Լորանս Ֆոթրան,** Տոբոգան թատրոնի նախագահ, Դեսինի քաղաքապետի տեղակալ **Դընի Զորկաեֆը:**

*«Նռան գույնը»* պարային ներկայացումը ֆրանս-հայկական համատեղ ծրագիր է: Բեմադրության հեղինակը Ֆրանսիայում հայտնի պարուսույց



Մուրադ Մերզուկին է: Գաղափարի հեղինակը Ֆրանսիայում գործող *«Սաթէ–Աթղը»* թատերական միության գեղարվեստական ղեկավար **Սաթէ Խաչատրյանն** է: Բեմադրության երաժշտությունը գրել է *«Յող Արթուն»* խումբը, իսկ բեմական հագուստների ձեւավորումն իրականացրել է **Էդգար Մանուկյանը:**

Նախագծի համակազմակերպիչ պրոդյուսերներն են Բրոն քաղաքի *«Պոլ-ան-Սցեն»* կազմակերպությունը, *«Սաթէ-Աթղը»* թատերական միությունը, ինչպես նաեւ Դեսինի *«Տոբոգան»* եւ Մոն-դը-Մարսանի *«Գասկոն»* թատրոնները, Օվերն-Ռոն-Ալպեր շրջանը, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանությունը, Հայաստանում ֆրանսիական ինստիտուտը, ինչպես նաեւ Հայկական բարեգործական ընդհանուր միության Ֆրանսիայի մասնաճյուղը:

Ներկայացման իրականացման աշխատանքներում իր կարեւոր ներդրումն է ունեցել ՀՀ ԿԳՄՍՆ ենթակայությամբ գործող ժողովրդական երաժշտության եւ պարի ազգային կենտրոնը:

Նախագծի առաջին ստեղծագործական ռեզիդենցիան կայացել է 2023թ. Ամռանը, Երեւանում: Ներկայացման մեջ ներգրավված յոթ պարողներից երկուսը հրավիրված են Հայաստանից:

Ներկայացումն անցել է լեփ-լեցուն դահլիճում՝ հոտնկայս բուռն ծափահարություններով:

2024թ. մարտի 15-ին եւ 16-ին *«Նռան գույնը»* պարային ներկայացումը կցուցադրվի Հայաստանում՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի բեմում: Հայաստանյան հյուրախաղերը կիրականացվեն ՀՀ ԿԳՄՍ նախարարության եւ Երեւանի քաղաքապետարանի բարձր հովանու ներքո:

Ֆրանսիայում ներկայացման առաջնախաղի օրը բարձրաստիճան հրավիրյալների մասնակցությամբ տեղի է ունեցել նաեւ Լիոնում ՀՀ գլխավոր հյուպատոսության եւ Սերգեյ Փաջանովի թանգարանի կողմից կազմակերպված **Զավեն Սարգսյանի** լուսանկարների ֆոտոցուցահանդեսը, որն իրականացվել է Տոբոգան թատրոնի, *«Սաթէ-Աթղը»* թատերական միության եւ Դեսինի քաղաքապետարանի աջակցությամբ: Ֆոտոցուցահանդեսում ներկայացված են Սերգեյ Փարաջանովի դիմանկարները, կոլաժները, *«Նռան գույնը»* ֆիլմի զգեստների էսքիզները եւ այլն: Ցուցահանդեսը Տոբոգան թատրոնում կգործի մինչեւ փետրվարի 4-ը:

Սիլվա Կապուտիկյան - 105

# Հիշատակի խնկարկման արարողություն

Մեծանուն բանաստեղծ Սիլվա Կապուտիկյանի ծննդյան 105-ամյակի առիթով Կոմիտասի անվան պանթեոնում՝ բանաստեղծի շիրիմի մոտ, տեղի է ունեցել հիշատակի խնկարկման արարողություն, որին մասնակցել է ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը:**



Հիշատակի արարողությանը ներկա են եղել նաեւ ԳԱԹ տնօրեն **Սյուզաննա Խոջամիրյանը,** Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի մասնաճյուղ Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարանի վարիչ **Արմենուհի Դեմիրճյանը,** մշակույթի գործիչներ, արվեստասերներ:

*«Տարիներ շարունակ Սիլվա Կապուտիկյանի ստեղծագործությունները դպրոցական ծրագրի մաս են կազմում եւ ծանոթ են դպրոցականներին: Կարեւոր է պահպանել եւ սերունդներին առավել հասանելի դարձնել նրա թողած գրական ժառանգությունը»,*- նշել է ԿԳՄՍ նախարարը:

Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է նաեւ Սիլվա Կապուտիկյանի մասին անձնական հուշեր. *«Առիթ եմ ունեցել անձամբ շփվելու նրա հետ. 1990-ականներին, երբ դպրոցական էի, ամռանը Սիլվա Կապուտիկյանը հանգստանում էր Ծաղկաձորի գրողների տանը եւ սիրում էր երկար քայլել: Ինձ հետաքրքրում էր, թե ինչու էր նա այդքան մտահոգ եւ ինչի մասին էին նրա մտքերը: Հետո, երբ կարդում էի նրա բանաստեղծությունները, հասկանում էի, թե ինչ էր այդ ժամանակ նա խորհում»:*

Պանթեոնի միջոցառումից հետո Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարանում տեղի է ունեցել բանաստեղծին նվիրված հուշ-ցերեկույթ: Ներկաներն անդրադարձել են գրողի կյանքին, ստեղծագործություններին, գրական-հասարակական գործունեությանը:

Հոբելյանի կապակցությամբ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի աջակցությամբ վերահրատարակվել է Սիլվա Կապուտիկյանի *«Էջեր փակ գզրոցներից»* գիրքը:

Գրքասեր կանանց ակումբ

# *«Մեր խնդիրն է՝ այնպես անել, որ դպրոցական տարիքից երեխան սիրի գիրքը»*

Նախարար **Ժաննա Անդրեասյանը** մասնակցել է Գրքասեր կանանց ակումբի տարեկան ամփոփիչ միջոցառմանը՝ որպես բանախոս:

Նախարարն անդրադարձել է հայ գրականության եւ պատմության մեջ կարեւոր դերակատարում ունեցող կանանց՝ Զապել Եսայանի եւ Շուշանիկ Կուրղինյանի օրինակով: Ըստ նախարարի՝ ի նշանավորումն այս կանանց պատմական դերի՝ 2023 թ. Երեւանի թիվ 180 դպրոցն անվանակոչվել է գրող, հրապարակախոս, ազգային-հասարակական գործիչ Զապել Եսայանի անունով, ինչպես նաեւ ԿԳՄՍ նախարարության պատվերով ու ֆինանսական միջոցներով պատրաստվել եւ Կոմիտասի անվան զբոսայգում տեղադրվել է Շուշանիկ Կուրղինյանի կիսանդրին, որը տարիներ առաջ գողացել էին:



*«Պատմական եւ հանրային ակտիվ դերակատարում ունեցած նշանավոր կանանց արժեւորումը կարեւոր է նաեւ ուսումնական գործընթացում կանանց մասին համապարփակ գիտելիքների փոխանցման, ինչպես նաեւ նրանց դերի եւ գործունեության տեսանելիության բարձրացման տեսանկյունից: Նրանք երեխաների համար լավագույն օրինակն են՝ նրանց պատմական դերը, փորձն ու ժառանգությունը, գիտելիքը, թողած արժեքները շարունակաբար նորացնելու եւ առաջ տանելու, վարքային մոդելներ ձեռք բերելու համար»,*- ասել է Ժաննա Անդրեասյանը:

Քննարկման ընթացքում անդրադարձ է եղել նաեւ ժամանակակից հայ գրողների ստեղծագործությունների ուսուցմանը հանրակրթական դպրոցներում: Այս համատեքստում Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է հանրակրթության նոր չափորոշչին, մասնավորապես՝ գրականության առարկայական չափորոշչով սահմանված փոփոխություններին ու առաջնահերթություններին: Ըստ նախարարի՝ ընթերցանության խրախուսումը հանրակրթության նոր չափորոշչի առաջնահերթություններից է՝ տեքստը հիմնարար հասկանալու, ընկալելու, վերլուծելու, քննարկելու, կարծիք հայտնելու եւ այլ կարողություններ ձեւավորելու տեսանկյունից: *«Մեր խնդիրն է այնպես անել, որ դպրոցական տարիքից երեխան սիրի գիրքը, ձեւավորի կարդալու հմտություն, մտորի կարդացած յուրաքանչյուր գրքի շուրջ: Իսկ ընթերցանությունն այնպիսի սեր է, որը եթե սկսես, շղթայաբար շարունակվելու է ու չի դադարելու»,*- ընդգծել է Նախարարը:

Հանդիպման ընթացքում ներկաներն իրենց հուզող հարցերն են ուղղել նախարարին, որոնք վերաբերել են կրթության բովանդակությանը, գնահատման նոր մեխանիզմներին, դպրոցների շենքային պայմանների բարելավմանը:

Գրքասեր կանանց ակումբի հիմնադիր **Մարիամ Մարտիրոսյանը** հակիրճ ներկայացրել է ակումբի երեք տարվա գործունեությունը:

Չափորոշիչ

## Նոր նախաձեռնություն

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը մեկնարկում է հանրակրթության պետական չափորոշչի ներդրման լավագույն փորձառության խրախուսմանն ուղղված նոր նախաձեռնություն:

Նոր նախաձեռնության շրջանակում յուրաքանչյուր ամիս կընտրվեն հանրակրթության ուսումնական հաստատությունների լավագույն աշխատակիցները հետեւյալ 10 անվանակարգերում.

- *«Չափորոշչի ներդրմանն աջակցող լավագույն տնօրեն»*
- *«Չափորոշչի ներդրմանն աջակցող տնօրենի տեղակալի պաշտոն զբաղեցնող լավագույն տեղակալ»*
- *«Լավագույն խմբակավար»*
- *«Հայոց լեզու եւ գրականություն» բնագավառի լավագույն ուսուցիչ»*
- *«Հայրենագիտություն» բնագավառի լավագույն ուսուցիչ»*
- *«Օտար լեզուներ» բնագավառի լավագույն ուսուցիչ»*
- *«Բնագիտություն, Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, Մաթեմատիկա (ԲՏՃՄ)» բնագավառի լավագույն ուսուցիչ»*
- *«Հասարակություն, հասարակական գիտություններ» բնագավառի լավագույն ուսուցիչ»*
- *«Արվեստ եւ արհեստ» բնագավառի լավագույն ուսուցիչ»*
- *«Ֆիզիկական կրթություն եւ անվտանգ կենսագործունեություն» բնագավառի լավագույն ուսուցիչ»:*

Նախաձեռնությանը հայտեր կարող են ներկայացնել տվյալ պահին աշխատող տնօրենները, փոխտնօրենները, ուսուցիչները՝ իրենց լիազոր մարմին (Երեւանի քաղաքապետարան, ՀՀ մարզպետարաններ) ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ, տեղեկանք աշխատավայրից, ինչպես նաեւ անվանակարգերի համար պահանջվող նյութերը (տես՝ կից ներկայացվող ընթացակարգը):

Հավելյալ հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել՝ 010-572-100 եւ 033-572-100 հեռախոսահամարներին (*«Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոն»* հիմնադրամ, Լիլիթ Մկրտչյան):

Կառավարության նիստում

# Հաստատվել է ԼՂ-ց բռնի տեղահանված անձանց աջակցության տրամադրման հերթական ծրագիրը

Կառավարությունը հաստատել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման եւ աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրման ծրագիրը: Ինչպես նշել է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար **Նարեկ Մկրտչյանը,** ծրագիրն ունի երեք բաղադրիչ: Առաջին բաղադրիչը մասնագիտական ուսուցումն է՝ դրանից հետո առնվազն երեք ամիս պարտադիր աշխատանքի պայմանով, երկրորդ բաղադրիչը վճարովի պրակտիկան է, որից հետո պարտադիր աշխատանքի տեղավորում՝ առնվազն երեք ամսով, եւ երրորդ բաղադրիչը՝ մասնագիտական ուսուցումն է՝ դրանից հետո վճարովի պրակտիկա եւ աշխատանքի տեղավորում:



*«Առաջին ուղղության դեպքում ԼՂ-ից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին առաջարկում ենք մինչեւ հինգ ամիս տեւողությամբ մասնագիտական ուսուցում: Այդ ընթացքում գործատուն պետք է որոշի, թե որ ուսումնական հաստատությունում եւ կրթական կենտրոնում այդ վերապատրաստումը պետք է անցկացվի: Մենք այդ ընթացքում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակցին տրամադրում ենք 50 հազար դրամ կրթաթոշակ եւ եւս 50 հազար դրամ՝ուսման վարձը վճարելու համար: Այնուհետեւ, երբ կներկայացնի կրթաշրջանը անցնելու վերաբերյալ վկայականը, առնվազն 3 ամիս ժամկետով կկնքվի աշխատանքային պայմանագիր գործատուի հետ, եւ երեք ամսվա ընթացքում 50 հազար դրամի չափով կփոխհատուցվեն գործատուի հարկերը: Ընդ որում, ե՛ւ ուսման վարձը, ե՛ւ կրթաթոշակը մենք տրամադրելու ենք մասնակցած օրերի համար: Եվ այստեղ մի ֆիլտր կա դրվածգ եթե գործատուն աշխատանքային պայմանագիրը չի կնքում կամ մինչեւ երեք ամիս լրանալը լուծում է պայմանագիրը, ապա ԼՂ-ից բռնի տեղահանված մեր հայրենակցին փոխհատուցում է կրթաթոշակի եւ ուսման վարձի գումարը: Երկրորդ բաղադրիչը վերաբերում է վճարովի աշխատանքային փորձի ձեռք բերմանը եւ պրակտիկային: Գործատուի եւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակցի միջեւ կնքվում է 6 ամիս տեւողությամբ պայմանագիր, որից երեք ամիսը պարտադիր դիտարկվում է որպես վճարովի աշխատանքային պրակտիկա: Այսինքն՝ գործատուին ամսական տրամադրելու ենք 165 հազար դրամ՝ շահառուին աշխատավարձի եւ համապատասխան հարկերը վճարելու համար: Ընդ որում, հարկերը հանած, 120 հազար դրամ, աշխատավարձ է մնում: Պրակտիկայից հետո գործատուն պարտավորվում է եւս երեք ամիս շահառուին ապահովել աշխատանքով, որի դիմաց գործատուին երեք ամիս շարունակ վճարվում է ամսական առավելագույնը 50 հազար դրամ՝ պարտադիր հարկերը վճարելու համար: Գործատուի եւ շահառուի միջեւ կնքված աշխատանքային պայմանագիրը մինչեւ վեց ամիսը լրանալը լուծելու դեպքում գործատուն պարտավորվում է ամբողջությամբ վերադարձնել աշխատանքային պրակտիկայի ընթացքում իրեն տրամադրված գումարից շահառուին որպես աշխատավարձ վճարված գումարը: Երրորդ բաղադրիչը միավորում է բոլոր բաղադրիչները. այսինքն՝ մասնագիտական կրթություն, վճարովի աշխատանքային պրակտիկա եւ աշխատանքի ընդունելու պարտադիր պայման»,-* ասել է Նարեկ Մկրտչյանը:

Ըստ նախարարի՝ ծրագիրն արդեն իսկ գործարկվել է 2016-2020-ի ռազմական գործողություններին մասնակցած զինվորների համար եւ փորձը ցույց է տվել, որ ծրագրի շահառուների 70 տոկոսից ավելին մնացել է աշխատաշուկայում:

Անդրադառնալով ծրագրին՝ վարչապետը հետաքրքրվել է՝ գործատուն եւ աշխատողը ինչպես եւ որտեղ են հանդիպում, խոսքը լիցենզավորված ուսումնական հաստատությունում մասնագիտական կրթություն ստանալու մասին է: Ի պատասխան Նարեկ Մկրտչյանը նշել է. *«Ամսական կտրվածքով Միասնական սոցիալական ծառայություն են դիմում 300-500 գործատուներ, որոնք ներկայացնում են աշխատատեղերի պայմաններ եւ աշխատողների անհրաժեշտ հմտությունները: Մենք այդ հայտերն ընդունում ենք եւ ԼՂ-ից բռնի տեղահանված մեր հայրենակիցները, որոնք առնվազն վերջին մեկ ամսվա ընթացքում աշխատանք չեն ունեցել, ստուգում ենք թե նրանք ինչպիսի հմտություններ ունեն եւ եթե համապատասխանում են գործատուների ներկայացրած պահանջներին, մենք 2 օրվա ընթացքում իրենց տվյալներն ուղարկում ենք գործատուին եւ գործատուն ընտրում է այդ պոտենցիալ հավակնորդներին: Գործատուն ինքն է ընտրում, թե որտեղ վերջինս անցնի վերապատրաստում, դա կարող է լինել միջին մասնագիտական հաստատություն, կարող է լինել մասնավոր կրթական կազմակերպություն, որոշ դեպքերում՝ գործատուն հենց իրենց մոտ ունեն կրթական բաղադրիչներ, եւ եթե ինքը գտնում է նպատակահարմար, որ պետք է գնա վերապատրաստվի, ապա մենք ե՛ւ կրթավճարն ենք տալիս, ե՛ւ վարձավճարը»:*

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն էլ իր հերթին պարզաբանել է, որ կա 2 իրավիճակ. առաջինը, երբ ամբողջական որակավորում տվող դասընթացն է, որի ավարտին տրվում է դիպլոմ, երկրորդը՝ որոշակի որակավորում տվող դասընթաց, դա պահանջում է լիցենզիա: *«Այս պարագայում պարտադիր է, որ կրթական հաստատությունը լիցենզիա ունենա՝ լինի դա մասնավոր, թե պետական: Եվ ունենք կարճաժամկետ կրթական ծրագրեր՝ մինչեւ 6 ամիս տեւողությամբ, որոնք պահանջում են ոչ թե լիցենզիա, այլ երաշխավորում»,-* նշել է ԿԳՄՍ նախարարը:

Ծրագրի շուրջ ծավալվել է մտքերի փոխանակություն, ներկայացվել են առաջարկություններ եւ դիտարկումներ: Նիկոլ Փաշինյանն առաջարկել է ծրագրի ուսուցման ժամկետ սահմանել առավելագույնը ոչ թե 5 ամիս, ինչպես նախատեսված է, այլ 6 ամիս, քանի որ կան նաեւ այնպիսի դասընթացներ, որոնք կարող են տեւել 6 ամիս:

# Գիտական աստիճանի համար ամենամսյա հավելավճարի տրամադրման չափը եւ կարգը

Կառավարությունը սահմանել է Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման բազային ծրագրերում ներգրավված եւ առնվազն աշխատաժամանակի նորմալ տեւողությամբ աշխատող գիտական աշխատողներին գիտական աստիճանի համար ամենամսյա հավելավճարի տրամադրման չափը եւ կարգը: Ըստ այդմ՝ առաջարկվում է 2024 թ. հունվարի 1-ից գիտական աստիճանի համար հավելավճար հատկացնել գիտական եւ գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման բազային ծրագրերում ներգրավված եւ առնվազն աշխատաժամանակի նորմալ տեւողությամբ աշխատող գիտական աշխատողներին՝ պահպանելով ներկայումս սահմանված գիտական աստիճանի համար հավելավճարների չափը. գիտությունների դոկտորին՝ 50 000 դրամ, գիտությունների թեկնածուին՝ 25 000 դրամ: Որոշման ընդունումը կփոխի գիտական ներուժի կադրային կառուցվածքը եւ կնպաստի գիտության ոլորտում կադրերի ամրապնդմանը, գիտության եւ տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող կադրերի թվաքանակի կայուն աճին եւ գիտական ներուժի արդյունավետ նպատակային վերարտադրությանը, լրացուցիչ խթան կհանդիսանա գիտական աշխատանքը՝ որպես հիմնական աշխատանք ընտրելու գործում եւ կբարձրացնի պետբյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը:

Ինչպես նշել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը,** Հայաստանում 1 միլիոն բնակչի հաշվով գիտաշխատողների լրիվ ամբողջական զբաղվածության ցուցանիշը բավականին ցածր է: *«ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների մեջ կարեւոր տեղ է գրավում այնպիսի ցուցանիշ, ինչպիսին փաստացի գիտաշխատողների լրիվ զբաղվածության համարժեքն է 1 միլիոն բնակչի հաշվով: Սա ցույց է տալիս գիտաշխատողների այն համամասնությունը, որոնք ունեն լրիվ զբաղվածություն եւ զբաղվում են գիտական գործունեությամբ: Պետք է ասեմ, որ Հայաստանում այս ցուցանիշը բավական ցածր է: Ընդհանուր առմամբ, մենք ունենք 2455 նման գիտաշխատող, որը 1 միլիոն բնակչի հաշվարկով կազմում է մոտ 830, եւ այս ցուցանիշով բավական զիջում ենք մյուս երկրներին, այդ թվում՝ տարածաշրջանի: Հետեւաբար, անհրաժեշտ է, որպեսզի մեր քաղաքականության գործիքները խրախուսեն գիտաշխատողների լրիվ զբաղվածությամբ գիտական գործունեությամբ զբաղվելը: Այդ իմաստով, պետք է նշեմ, որ 2008 թվականից կար կառավարության մի որոշում, որով գիտական աշխատողները պետական ֆինանսավորման ծրագրերում ներգրավված լինելու պարագայում իրենց գիտական աստիճանի համար ստանում էին հավելավճար՝ գիտությունների թեկնածուները 25 հազար դրամի չափով եւ գիտությունների դոկտորները՝ 50 հազար դրամի չափով: Ընդ որում, հավելավճարը հատկացվում էր գիտնականին, եթե նա պետական ֆինանսավորման ծրագրերում ներգրավված էր առնվազն նվազագույն աշխատավարձի ու դրանից բարձր վարձատրության պարագայում: Քանի որ մենք գիտաշխատողների աշխատավարձերի բարձրացման քաղաքականություն ենք վարում 2022 թ. հունվարից սկսած, այս պահին մի իրավիճակ ունենք, որ փաստորեն անգամ համատեղությամբ աշխատող գիտնականի պարագայում սահմանված նվազագույն աշխատավարձի շեմը հաղթահարվում է, հետեւաբար, գործող կարգը ուղղակի վերածվել է առանց նախապայմանի հավելավճար տրամադրելու գործիքի: Ուստի այս փոփոխություններն ենք նախաձեռնել, որով կանոնակարգում ենք գիտական աստիճանի համար հատկացվող հավելավճարի տրամադրման պայմանները՝ հավելավճարի չափը պահպանելով նույնը»,-* ասել է նախարարը:

***շարունակությունը՝ էջ 5***

Կամավոր ատեստավորում

# «Շնորհակալություն՝ առաջինը լինելու համարձակության համար»

Նախարար **Ժաննա Անդրեասյանը** հանդիպել է նախադպրոցական ուսումնական հաստատությունների տարակարգ ստացած մանկավարժներին եւ արտադպրոցական ուսումնական հաստատությունների՝ արվեստի եւ երաժշտական դպրոցների, մարզադպրոցների մանկավարժներին, որոնք մասնակցել են կամավոր ատեստավորմանը եւ դրական արդյունք են գրանցել:

Նախարարը ողջունել է մանկավարժներին եւ շնորհավորել մասնագիտական զարգացման ծրագրերին հաջող մասնակցության համար:

*«Նախորդ տարի ԿԳՄՍ նախարարությունը նախաձեռնել է հավելավճարի տրամադրման ծրագրեր նախադպրոցական եւ արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների համար: Նախադպրոցական հաստատությունների համար ծրագիրն իրականացվել է տարակարգի շնորհման միջոցով: 2023 թվականը մեկնարկային տարին էր, եւ շատ ուրախ եմ, որ ունենք մանկավարժներ, որոնք դիմել են*




*եւ գրանցել հաջողված արդյունքներ: Ակնկալում ենք՝ կդիմեք նաեւ տարակարգի ավելի բարձր աստիճաններ ստանալու համար, եւ ձեր օրինակը խրախուսիչ կլինի համակարգում աշխատող ձեր գործընկերների համար»*,- ասել է Ժաննա Անդրեասյանը:

Նախարարի ընդգծմամբ՝ նախորդ տարին մեկնարկային էր նաեւ մարզադպրոցների եւ արվեստի դպրոցների մանկավարժների համար. նրանք հնարավորություն ստացան մասնակցելու կամավոր ատեստավորման գործընթացին եւ պետության կողմից ստանալ հավելավճար: Նախարար Ժաննա Անդրեասյանի տեղեկացմամբ՝ մարզաձեւերի 4 եւ արվեստի 3 ուղղությունների փոխարեն այս տարի էապես ընդլայնվել են արտաուսումնական հաստատությունների կամավոր ատեստավորման բնագավառները՝ ընդգրկելով 19 ուղղություն:

*«Շնորհակալություն բոլորիդ՝ առաջինը լինելու համարձակության համար, քանի որ առաջին անգամ մասնակցելը բարդ է, լի է անորոշությամբ ու մտավախությամբ. դիմե՞լ, թե՞ սպասել եւ ուրիշի փորձով հասկանալ՝ ինչպես է աշխատում ծրագիրը: Այս քայլով դուք ոչ միայն գրանցել եք ձեր անձնական հաջողությունն ու մասնագիտական զարգացման առաջընթացը, այլեւ մեզ օգնել եք գործարկել եւ զարգացնել այս կարեւոր ծրագիրը: Դուք նաեւ լավ օրինակ եք՝ ոլորտում աշխատող մյուս մասնագետների համար»*,- ասել է Ժաննա Անդրեասյանը եւ հույս հայտնել, որ նրանց փորձն ու հաջողությունը վարակիչ կլինեն մյուս մանկավարժների համար:

Նախարարի առաջարկությամբ՝ մանկավարժները կիսվել են գործընթացի վերաբերյալ իրենց կարծիքներով, տպավորություններով, մտահոգություններով ու ներկայացրել իրենց առաջարկները: Դրանք մասնավորապես վերաբերել են վարձատրման ձեւաչափին, թեստերի բովանդակությանը, մասնագիտական գրականության տրամադրման ժամկետներին, սահմանված դրույքաչափերին եւ այլն: Նախարարը շնորհակալություն է հայտնել դիտարկումների համար եւ նշել, որ առաջիկա փոփոխություններում անպայման դրանք հաշվի կառնվեն:

*«Դպրոց-համայնք համագործակցություն»*

# Կրթօջախը՝ ռեսուրս կենտրոն

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանը** մասնակցել է *«Դպրոց-համայնք համագործակցություն»* աշխատաժողովին, որով մեկնարկել է *«Աջակցություն Հայաստանում ապակենտրոնացման եւ տեղական ինքնակառավարման բարեփոխումներին»* (ԴեաԼոգ) ծրագիրը:

Աշխատաժողովին մասնակցել են Արեւելյան Եվրոպայի, Արեւմտյան Բալկանների եւ Լատինական Ամերիկայի ծրագրերի գծով տնօրեն **Լենա Ֆալկոնը,** ՏԿԵ նախարարության, ՀՀ տարբեր համայնքների, դպրոցների ներկայացուցիչներ:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը ողջույնի խոսքում կարեւորել ծրագրի մեկնարկը՝ ընդգծելով դպրոց-համայնք համագործակցության զարգացումը. *«Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը որպես պատասխանատու ստորաբաժանում կարեւորում է դպրոցների դերակատարության բարձրացումը համայնքային կյանքում: Դպրոցը, զարգացնելով իր գործառույթները, պետք է դառնա այն պատասխանատու կառույցը, որի շուրջ կարող են կազմակերպվել համայնքային կյանքի աշխուժացման մի շարք գործընթացներ: Այս համատեքստում կարեւորում ենք դպրոցների՝ որպես համայնքային կենտրոններ գործելու հեռանկարը»:*

Ըստ Արաքսիա Սվաջյանի՝ *«ԴեաԼոգ»* ծրագիրն օգնելու է ավելի թիրախային եւ պլանավորված իրականացնել ապակենտրոնացմանն ուղղված պետական քաղաքականությունը, ինչպես նաեւ արձանագրել ընթացիկ խնդիրներն ու դրանց լուծման ճանապարհները: Փոխնախարարն անդրադարձել է նաեւ Կառավարության՝ *«300 դպրոց, 500 մանկապարտեզ»* ծրագրի շրջանակում նախատեսվող կրթահամալիրների




կառուցմանը. *«Մենք ունենալու ենք ժամանակակից պահանջներին համապատասխանող միջավայրեր, ենթակառուցվածքներ, որոնք հնարավորություն կտան նախաձեռնելու երիտասարդական, մշակութային, մարզական տարբեր միջոցառումներ, գործունեության ձեւեր ոչ միայն երեխաների, այլեւ համայնքի այլ բնակիչների համար: Դպրոցը կարող է դառնալ այն ռեսուրս կենտրոնը, որի օգնությամբ համայնքը կկարողանա լուծել իր խնդիրները: Վստահ եմ, որ այս ծրագրի շրջանակում ընդգրկված դպրոցները այն առաջամարտիկներն են դառնալու, որոնք սկսելու են համայնքի կարիքներին համապատասխան գործունեություն իրականացնել»:*

Արաքսիա Սվաջյանը պատասխանել է նաեւ ներկաների հարցերին՝ անդրադառնալով կրթության բովանդակության, հանրակրթության նոր չափորոշչի, սովորողների՝ կրթական գործընթացում ներգրավվածության ապահովման եւ այլ խնդիրների:

# Գիտական աստիճանի համար ամենամսյա հավելավճարի տրամադրման չափը եւ կարգը

***սկիզբը՝ էջ 4***

*«Կարգի ընդունումից հետո,-* շարունակել է Ժաննա Անդրեասյանը,- *հավելավճար կստանան միայն այն գիտական աշխատողները, որ ունեն գիտական աստիճան, ներգրավված են պետական ֆինանսավորման բազային ծրագրերում եւ աշխատում են աշխատաժամանակի ամբողջական ծանրաբեռնվածությամբ: Այս մոտեցմամբ հավելավճարի տրամադրման այս գործիքը կդառնա գիտության ոլորտում նորմալ ծանրաբեռնվածությամբ աշխատանքի անցնելու հավելյալ խթան: Սա կարեւոր է, որպեսզի գիտական գործունեությունը դիտարկվի իբրեւ պրոֆեսիոնալ ու հիմնական զբաղմունք: Մեր դիտարկումներով՝ այս պահին բազային ֆինանսավորման ծրագրերում ներգրավված գիտական աստիճան ունեցող 2162 անձանցից 778-ը այս պայմաններին բավարարման խնդիր կունենան, եւ դրանով իսկ կխրախուսենք, որպեսզի նրանք նույնպես անցում կատարեն ամբողջությամբ ծանրաբեռնվածությամբ աշխատանքի»:*

Անդրադառնալով առաջարկվող փոփոխությանը՝ **Նիկոլ Փաշինյանը** հիշեցրել է, որ հունվարի 1-ից արդեն երրորդ անգամ անընդմեջ Հայաստանում գիտաշխատողների աշխատավարձը բարձրացել է. *«Ընդ որում գործընթացը դեռ չի ավարտվել, եւ աշխատավարձի բարձրացում է նախատեսվում նաեւ 2025 թվականի հունվարի 1-ից: Ընդ որում՝ մենք ունենք մինչեւ 300 տոկոսով աշխատավարձերի բարձրացումներ: Հիմա այս որոշմամբ մենք ի՞նչ ենք ասում: Ասում ենք, որ մեր հարգարժան դոկտորները եւ գիտության թեկնածուները պետք է ավելի շատ գիտական գործունեությամբ զբաղվեն այն տեղերում, որտեղ աշխատավարձերը բարձրացել են եւ դեռ բարձրանալու են, որպեսզի ստանան նաեւ իրենց գիտական աստիճանի հավելավճարները»:*

Գիտական աստիճաններ շնորհելու հետ կապված հարցին ի պատասխան Ժաննա Անդրեասյանը նշել է. *«Բարձրագույն կրթության եւ գիտության նոր օրենքում ընդհանրապես գիտական աստիճանի շնորհման մոտեցումն է փոխվում, երկաստիճան համակարգից անցում է կատարվում մեկ աստիճանի համակարգին եւ ավելի կանոնակարգվում են աստիճանաշնորհման եւ դրա հետ կապված բացահայտվող խնդիրներին արձագանքելու հարցերը»:*

Նիկոլ Փաշինյանի խոսքով՝ քանի որ գիտության ոլորտում աշխատավարձերը փոխվել են, այդ նվազագույն աշխատավարձի հետ կապը նույնպես պետք է վերացնենք. *«Եվ, այո՛, սրանով շուրջ 700 գիտնական այդ հավելավճարը ստանալ չստանալու խնդիր կունենա: Բայց մեր նպատակն այն չէ, որ նրանք հավելավճար չստանան: Մեր նպատակն այն է, որ սրանով նրանց խրախուսենք, խնդրենք, քաջալերենք, որ իրենք բուն գիտական գործունեությամբ ավելի շատ զբաղվեն»:*

Վարչապետն այդ համատեքստում ընդգծել է նաեւ գիտությամբ զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծման կարեւորությունը. *«Այս որոշմամբ, մենք նրանց խնդրում ենք, որպեսզի նրանք ավելի ակտիվ զբաղվեն գիտությամբ, մանավանդ, որ կարծում ենք, որ դրա համար, չեմ ասում իդեալական, բայց որոշակի պայմաններ ստեղծել ենք: Մենք վերջերս Գիտությունների ազգային ակադեմիայում խոսում էինք, թե վերջին տարիներին ինչքան գիտական սարքեր ենք ձեռք բերել եւ ինչքան գիտական սարքեր ենք ձեռք բերելու: 2024 թվականին, եթե հիշողությունս չի դավաճանում, մի քանի միլիարդ գիտական սարքերի ձեռքբերում է նախատեսված»:*

ԿԳՄՍ նախարարը հիշեցրել է կառավարության վերջերս հաստատած գիտաշխատողների ատեստավորման նոր կարգի մասին եւ նշել, որ այն համահունչ է այս մոտեցումներին. *«Այսինքն՝ այնտեղ էլ մենք այնպիսի խթաններ էինք դրել, որը պետք է գիտաշխատողներին խրախուսի էլ ավելի ինտենսիվ գիտական գործունեություն վարել, ընդ որում միջազգային առումով մրցունակ արտադրանքի մասին է խոսքը: Եվ այս հավելավճարների քաղաքականությունն էլ գալիս է կապվելու ատեստավորման այդ նույն տրամաբանությանը»:*

# 2023 թվականի 10 լավագույն մարզիկների պարգեւատրման արարողությունը

ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** Հանրապետության նախագահ **Վահագն Խաչատուրյանի** հետ ներկա են գտնվել 2023 թվականի 10 լավագույն մարզիկների պարգեւատրման հանդիսավոր արարողությանը: Միջոցառմանը ներկա են եղել նաեւ Վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը,** ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Կարեն Գիլոյանը,** պաշտոնատար այլ անձինք, հայկական սպորտի ոլորտի բազմաթիվ ներկայացուցիչներ:





Միջոցառման սկզբում վարչապետ Փաշինյանը հանդես է եկել ելույթով, որում նշել է.

*«Հայաստանի Հանրապետության մեծարգո՛ նախագահ,*

*Գործադիր իշխանության, օրենսդիր իշխանության հարգելի՛ ներկայացուցիչներ,*

*Մարզաշխարհի հարգելի՛ ներկայացուցիչներ,*

*Նախ, ուզում եմ շնորհավորել բոլորիս՝ նախորդ տարում մեր արձանագրած սպորտային ցուցանիշների առիթով: Այդ ցուցանիշները վստահություն են տալիս, որ այն քաղաքական որոշումները, որ մենք կայացնում ենք, առնվազն ճիշտ ընթացք ունեն: Հիշում եք, երբ որոշում էինք կայացրել, որ պետք է մարզիկներին, ովքեր առաջին հաջողություններն են ունենում, կամ հաջողության առաջին նախանշաններն են ցույց տալիս, պետք է իրենց հաջողության ճանապարհին ուղեկցենք: Այս առումով, հաճույքով եմ ուզում արձանագրել, որ այսօրվա դրությամբ Հայաստանի պետական բյուջեից երկու մարզիկ ստանում են ամիսը մեկ միլիոն դրամ եւ ավելի աջակցություն, 24 մարզիկ ստանում են 500 հազար դրամ եւ ավելի աջակցություն, 64 մարզիկ ստանում են 100-ից 500 հազար դրամ ամենամսյա աջակցություն: Սա շատ կարեւոր է, ինչո՞ւ, որովհետեւ պիտի առավելագույնն անենք, որ մեր տաղանդավոր մարզիկները հնարավորություն ունենան կենտրոնանալ իրենց մարզական գործի վրա: Այս առումով, որպեսզի պատանիներն այս կետին հասնեն, շատ էական է, որ լինեն մարզական ենթակառուցվածքներ: Հաճույքով եմ արձանագրում, որ 2023 թվականի ընթացքում շահագործման ենք հանձնել 52 դպրոցական մարզադահլիճ, որոնք մեր մարզիկները նաեւ օգտագործում են մարզումների համար, ֆիզկուլտուրայի դասերի համար, եւ այդ 52 մարզադահլիճներից 24-ը կամ կառուցվել, կամ հիմնանորոգվել են առանձին վերցրած որպես մարզադահլիճ, եւս 28 դպրոցում ուղղակի դպրոցի ընդհանուր վերանորոգման, կամ կառուցման, կամ հիմնանորոգման շրջանակներում կառուցվել են նաեւ այս մարզադահլիճները: Ընդհանուր առմամբ, շատ կարեւոր է արձանագրել նաեւ այն դինամիկան, որ ունենք սպորտի ոլորտի ֆինանսավորման բնագավառում: 2018 թվականին Հայաստանում սպորտի ոլորտը տարեկան բյուջեից ֆինանսավորվում էր 2 մլրդ 144 մլն դրամ: 2023 թվականին սպորտի ոլորտի ֆինանսավորումը կազմել է 10 մլրդ 288 մլն դրամ: Այսինքն՝ 2018-ի համեմատ 8 մլրդ 144 մլն դրամով կամ 479 տոկոսով ավելի: Նաեւ ուրախությամբ եմ արձանագրում, որ այս տարի ավարտել ենք 7 մարզական օբյեկտներ, որոնք շահագործման են հանձնվել կառավարության, կամ Երեւանի քաղաքապետարանի, կամ գործընկեր ֆեդերացիաների կողմից: Մասնավորապես, Խորեն Հովհաննիսյանի ֆուտբոլի դպրոցը, Դիլիջանի մասնավոր դպրոցը, երբ համայնքի եւ մասնավորի համագործակցությամբ վերջերս բացումը տեղի ունեցավ, Երեւանի բադմինթոնի մարզադպրոցը, Կիլիկիայի հայտնի մարզադահլիճը: Առաջիկա 10-15 օրերին Ջրառատում շահագործման կհանձնվի Սիմոն Մարտիրոսյանի անվան մարզադպրոցը: Այս տարի Երեւանի քաղաքապետարանի կողմից 3 մարզադպրոց է շահագործման հանձնվել. Արաբկիրի մենապայքարային մարզաձեւերի մարզադպրոցը, Շենգավիթի համալիր մարզադպրոցը, Շենգավիթի կոխ ազգային ըմբշամարտի մարզադպրոցը: Նաեւ 2024 թվականին ծրագրեր ունենք, եւ շինարարության տարբեր փուլերում կլինեն, մասնավորապես, Երեւանում հեծանվային սպորտի, գեղարվեստական մարմնամարզության մարզադպրոցները, Շիրակում Արթուր Ալեքսանյանի անվան մարզական համալիրը, Երեւանում Օլիմպիական հերթափոխի քոլեջի վերակառուցում տեղի կունենա, Երեւանում կսկսենք Օլիմպիական հերթափոխի քոլեջի բոքսի եւ ձյուդոյի մարզադահլիճի նախագծման աշխատանքները, Ալագյազ համայնքի համար Ռոման եւ Մալխաս Ամոյանների անվան մարզադպրոցի նախագծման աշխատանքները, Արթուր Աբրահամի անվան մարզադպրոցի աշխատանքները, խաղային մարզաձեւերի մարզադպրոցը Երեւանում եւ Վայոց ձորում, Եղեգնաձորում եւ Բերդում մարզական կենտրոնների կառուցումը կձեռնարկենք, որը կլինի եւ ֆիթնես կենտրոն, եւ մարզադպրոց, եւ երեխաների, եւ մեծահասակների համար: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ համատեղ նախատեսում ենք 4 ֆուտբոլային դպրոցների կամ ակադեմիաների ստեղծում Արտաշատում, Երեւանի Դավթաշեն վարչական շրջանում, Իջեւանում, Մարտունիում: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան կիրականացնի նաեւ 40 մարզադաշտերի շինարարություն Երեւանում, Կոտայքում, Արմավիրում եւ Սյունիքում: Ինչպես նաեւ դպրոցաշինության ծրագրի շրջանակներում կշարունակենք մեր աշխատանքները: Նաեւ նախատեսվում են Շենգավիթի մենապայքարային ձեւերի բարձրագույն վարպետության մարզադպրոցի հիմնանորոգման, վերակառուցման աշխատանքները, Աջափնյակի համալիր մարզադպրոցի, Նոր Նորքի Տորք Անգեղ մարզամշակութային համալիրի աշխատանքները: Գիտեք նաեւ, որ Ազարյանի անվան մարզադպրոցի նոր կենտրոնի կառուցում է նախատեսվում: Կարճ ասած, մենք մարզական ոլորտի մեծ ծրագրեր ենք իրականացնում նաեւ հետեւյալ ըմբռնմամբ. այսօր կան այլ ենթակառուցվածքներ, որոնք նախագծային առումով ի սկզբանե նախատեսված չեն մարզական ոլորտում օգտագործման համար, բայց մենք շատ դեպքերում այդ օբյեկտներ այցելելով տեսնում ենք, որ այնտեղ հնարավոր է նաեւ որոշակի մարզաձեւերի, խմբակների պարապմունքներ կազմակերպել: Իմ հանձնարարականն է, որ այդ ուղղությամբ գնանք եւ նաեւ մասնավոր հատվածին վարձակալության տանք այդ տարածքները: Ուրախ եմ, որ որոշակի հետաքրքրություն է առաջանում:*

*Մեծարգո՛ պարոն նախագահ,*

*Հարգելի՛ գործընկերներ,*

*Սպորտի բնագավառում շատ ասելիքներ ունենք, եւ դա լավ է: Իհարկե, համարում եմ, որ սպորտին պետք է վերաբերվենք որպես ռազմավարական ճյուղ եւ այդ ռազմավարությունը պետք երկու ուղղությամբ զարգանա: Ուղղություններից մեկը սպորտի մասսայականությունն է, որը մեր ռազմավարական նպատակներից մեկի հետ ուղիղ կապ ունի՝ առողջ ապրելակերպի քարոզչության սերմանումը Հայաստանի Հանրապետությունում: Եվ, իհարկե, մենք պետք է կարողանանք զարգացնել ոլորտն այնպես եւ այնքան, որ սպորտն ընկալենք որպես տնտեսության ճյուղ, որովհետեւ մեծ հաշվով սպորտը տնտեսության ճյուղ է եւ մենք բոլորս պետք է այդ ուղղությամբ տրամադրվենք: Այնքան մարզական օբյեկտները գրագետ կառավարման անհրաժեշտություն ունեն, հենց մարզական օբյեկտների գրագետ կառավարումն արդեն տնտեսական խնդիր է: Բոլոր դեպքերում Կառավարությունը կապիտալ ներդրումներ է անում, որպեսզի այդ մարզական օբյեկտները, ինչպես տնտեսագետները սիրում են ասել, ավելացված արժեք ստեղծեն: Որովհետեւ զուգահեռ ստեղծվում են հյուրանոցային համալիրներ, ժամանցի կենտրոններ եւ այլն: Եվ մեր ընկալումն այն չպետք է լինի, որ սուբսիդավորման պրոցեսը պետք է շարունակվի, այդ մարզական օբյեկտները պետք է տնտեսական ճիշտ հենքի եւ բանաձեւերի վրա դրվեն, որպեսզի դրանք էֆեկտիվ կառավարվեն: Ոչ թե արված ներդրումը ժամանակի մեջ մաշվի, այլ եղած ներդրումը նոր միջոցներ բերի եւ ապահովի ֆիզկուլտուրայի եւ սպորտի բնականոն զարգացումը: Եվ իհարկե, այս ամենն անում ենք նաեւ մեր սիրելի մարզիկների հաջողություններից ոգեւորված եւ հույս ունենք նաեւ, որ Կառավարության այսպիսի մոտեցումները նրանց մի փոքր լրացուցիչ ուժ կտա, որպեսզի նրանք մրցահարթակներում իրենց ավելի լավ զգան, ավելի վստահ զգան, վստահ լինելով, որ այն ինչ անում են, ոչ միայն իրենց թիմի, ոչ միայն իրեն մարզական միջավայրի, ոչ միայն իրենց թաղամասի եւ քաղաքի համար է էական եւ ռազմավարական, այլ Հայաստանի Հանրապետության ռազմավարական զարգացման համար: Որովհետեւ մեծ սպորտն ինչ-որ առումով նաեւ պետական ինստիտուտ է, որովհետեւ իհարկե հաջողության դեպքում մարզիկները փառաբանվում են եւ դա նորմալ է, բայց եթե անկեղծ լինենք, ավելի շատ փառաբանվում է երկիրը, պետությունն իր պետական ատրիբուտներով: Նաեւ սա է պատճառը, որը ուզում ենք սպորտը շարունակաբար զգա Հայաստանի Հանրապետության կառավարության աջակցությունը եւ սպորտի օրինակով ոգեւորվեն նաեւ պատանիներն՝ առողջ ապրելակերպ որդեգրելու առումով: Կարեւոր է, որ նաեւ մեր կայացրած որոշումներն ենք ձեւափոխում: Օրինակ, երբ հիմնեցինք խճուղային հեծանվավազքի վարչապետի գավաթը, երկու տարի անցկացրել ենք այն եւ դժգոհ չենք այդ մրցաշարից, հետո նաեւ ժամանակի հովերը հաշվի առնելով, մտածեցինք, որ լավ կլինի դպրոցականների շրջանում հեծանիվ վարելու մշակույթն ավելի մասսայական դարձնել: Որոշեցինք հանրապետության բոլոր դպրոցների տարբեր տարիքային խմբերի համար ձեռք բերել չորսական հեծանիվ եւ հեծանվավազքի վարչապետի գավաթի մրցաշարը դարձնել թիմային:*

*Հարգելի՛ մարզիկներ,*

*Հարգելի՛ մարզիչներ,*

*Ուզում եմ շնորհակալություն հայտնել՝ ձեր գործադրած ջանքերի համար, մենք ձեզ շնորհակալ ենք եւ այն, ինչ անում ենք,՝ չենք համարում, որ անում ենք բավարար: Հաստատ դուք ավելիին եք արժանի, բայց կարծում եմ, ինչ արվում է՝ վատ չէ եւ հույս ունեմ, որ ներքուստ ձեզ գնահատված եք զգում: Այս ծրագրերը, այս մոտեցումները նաեւ ձեզ վստահություն են տալիս, թե ինչքան կարեւոր եք դուք, ձեր գործը Հայաստանի Հանրապետության համար»:*

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը, ամփոփելով մարզական տարին, նշել է, որ Հայաստանի Հանրապետության բոլոր տարիքային խմբերի մարզիկ-մարզուհիներն Աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններում, գավաթի խաղարկություններում, Ֆրանկոֆոնիայի եւ ԱՊՀ խաղերում 2023 թվականին, ընդհանուր առմամբ, նվաճել են ռեկորդային 445 մեդալ, այդ թվում՝ 125 ոսկե, 127 արծաթե, 193 բրոնզե: Այս ցուցանիշը 2022 թվականի համեմատ ավելի է 44,9 տոկոսով: Նախորդ տարի մեդալների թիվը կազմել էր 307:

Այնուհետեւ վարչապետ Փաշինյանը պարգեւները հանձնել է 2023 թ. հունահռոմեական ոճի ըմբշամարտի Եվրոպայի չեմպիոն, աշխարհի առաջնության արծաթե մեդալակիր **Արթուր Ալեքսանյանին,** 2023 թ. հունահռոմեական ոճի ըմբշամարտի Եվրոպայի չեմպիոն, աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր **Մալխաս Ամոյանին,** 2023 թ. ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր **Արման Անդրեասյանին,** 2023 թ. սպորտային մարմնամարզության Եվրոպայի առաջնության ոսկե եւ բրոնզե մեդալակիր **Արթուր Դավթյանին,** 2023 թ. ծանրամարտի Եվրոպայի եւ աշխարհի առաջնությունների արծաթե մեդալակիր **Վարազդատ Լալայանին,** 2023 թ.՝ ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի չեմպիոն, աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր **Արսեն Հարությունյանին,** 2023 թ.՝ բռնցքամարտի աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր **Նարեկ Մանասյանին,** 2023 թ. ծանրամարտի մեծահասակների Եվրոպայի առաջնության չեմպիոն, աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր **Գոռ Սահակյանին:**

Հարգելի պատճառներով միջոցառմանը ներկա չեն գտնվել 2023 թ. ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի չեմպիոն, աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր **Վազգեն Թեւանյանը** եւ 2023 թ. բռնցքամարտի աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր **Հովհաննես Բաչկովը:** Մրցանակները կհանձնվեն ավելի ուշ:

Համակարգ

# Պետական ավարտական քննությունների անցկացման ժամանակացույցը եւ աշխատակարգը

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել են պետական ավարտական քննությունների անցկացման ժամանակացույցը եւ աշխատակարգը:

Աշխատակարգով կարգավորվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման, 9-րդ դասարանում ավարտական եւ 12-րդ դասարանում պետական ավարտական քննությունների անցկացման գործընթացը, որը ներառում է քննությունների հայտագրումը, կազմակերպումը, անցկացումը, ստուգումը, գնահատումը, արդյունքների հրապարակումը եւ բողոքարկումը:

Ներկայում Տավուշի մարզի ուսումնական հաստատությունների բոլոր դասարաններում ուսուցումն իրականացվում է Հանրակրթության նոր պետական չափորոշչի համաձայն, որը պահանջում է քննությունների կազմակերպման եւ անցկացման գործընթացի առանձնահատկությունների հստակեցում եւ համակարգված, միասնական մոտեցում գործընթացին:

Ըստ այդմ՝ Տավուշի մարզի ուսհաստատությունների 4-րդ դասարանում գիտելիքի ստուգում չի իրականացվելու, իսկ 9-րդ դասարանում ավարտական եւ 12-րդ դասարանում պետական ավարտական քննություններն անցկացվելու են այլ ընթացակարգով: Հստակեցվել են քննությունների անցկացման ձեւը (գրավոր կամ բանավոր), նոր չափորոշչով ուսուցման դեպքում՝ 9-րդ դասարանում նաեւ նախագծային աշխատանքի եւ էսսեի միջոցով որոշ քննությունների հանձնման մեխանիզմները:

Մինչեւ հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրումը՝ 4-րդ դասարանում գիտելիքների ստուգումն անցկացվում է.

*- «Մայրենի» առարկայից՝ գրավոր (թեստ).*

*- «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր (թեստ):*

Բոլոր այն դպրոցներում, որտեղ կրթության առաջին աստիճանում ամբողջությամբ ներդրվել է հանրակրթության պետական նոր չափորոշիչը, 4-րդ դասարանի ավարտին 1-4-րդ դասարաններում սովորողի տարեկան բնութագրերի հիման վրա Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ինքնաշխատ եղանակով իրականացվում է ատեստավորում:

Մինչեւ հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրումը՝ 9-րդ դասարանում անցկացվում են ավարտական քննություններ հետեւյալ առարկաներից՝

*- «Հայոց լեզու» (գրավոր), թեստ.*

*- «Գրականություն» (բանավոր).*

*- «Հայոց պատմություն» (բանավոր).*

*- «Մաթեմատիկա» (գրավոր), թեստ.*

*- «Օտար լեզու» (տվյալ դպրոցում դասավանդվող օտար լեզուներից՝ սովորողի ընտրությամբ, բանավոր.*

*- «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» առարկաներ՝ սովորողի ընտրությամբ՝ գրավոր), թեստ.*

*- «Ֆիզկուլտուրա» (ստուգարք).*

*- Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողները քննություն են հանձնում նաեւ «Ռուս գրականություն» առարկայից (բանավոր).*

*- Ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողները քննություն են հանձնում նաեւ իրենց մայրենի լեզվից եւ գրականությունից՝ բանավոր:*

9-րդ դասարանում ուսուցումը նոր չափորոշչով կազմակերպող հաստատություններում անցկացվում են ավարտական քննություններ հետեւյալ առարկաներից.

*- «Հայոց լեզու» (գրավոր), թեստ.*

*- «Գրականություն» եւ «Հայոց պատմություն» - էսսե (գրավոր), քննության օրը՝ ԿԶՆԱԿ-ի կողմից նախապես մշակված թեմաների շրջանակում: Էսսեն ստուգվում է քննության օրը, եւ սովորողները գնահատվում են երկու առարկաներից:*

*- «Մաթեմատիկա» (գրավոր), թեստ.*

*- «Օտար լեզու» (տվյալ դպրոցում դասավանդվող օտար լեզուներից՝ սովորողի ընտրությամբ, բանավոր).*

*- «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» առարկաներ՝ սովորողի ընտրությամբ գրավոր՝ թեստերի միջոցով, որոնց բովանդակությունը համահունչ կլինի միջազգային ստուգատեսի թեստերի բովանդակությանը, կամ 9-րդ դասարանի երկրորդ կիսամյակում իրականացված նախագծային աշխատանքի հիման վրա՝ առնվազն 2 բնագիտական առարկայի համադրմամբ): Այն հաստատությունները, որոնք չունեն լաբորատորիաներ, սովորողները բնագիտական առարկաներից քննություն հանձնում են նախագծային աշխատանքի ձեւով:*

*- «Ֆիզկուլտուրա» (ստուգարք).*

*- Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողները քննություն են հանձնում նաեւ «Ռուս գրականություն» առարկայից (բանավոր):*

*- Ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողները քննություն են հանձնում նաեւ իրենց մայրենի լեզվից եւ գրականությունից:*

Նոր չափորոշչի ներդրումից հետո 9-րդ դասարանում *«Բնագիտություն»* առարկաներից նախագծային աշխատանքը հանձնվում է քննաշրջանից մեկ ամիս առաջ եւ ստուգվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2023 թվականի N 22-L հրամանով հաստատված մենթոր դպրոցների ներկայացուցիչներից ձեւավորված հանձնաժողովի կողմից:

Քննությունների անցկացման ժամանակահատվածը սահմանվել է կարգով:

12-րդ դասարանում անցկացվում են պետական ավարտական քննություններ՝ հետեւյալ առարկաներից՝

*- «Հայոց լեզու եւ հայ գրականություն» (գրավոր), թեստ.*

*- «Մաթեմատիկա» (գրավոր), թեստ.*

*- «Հայոց պատմություն» (գրավոր), թեստ.*

*- Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողները քննություն են հանձնում նաեւ «Ռուս գրականություն» առարկայից (բանավոր):*

*- Ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողները քննություն են հանձնում նաեւ իրենց մայրենի լեզվից եւ գրականությունից (բանավոր):*

*12-րդ դասարանում պետական ավարտական քննություններն անցկացվում են հունվարի երկրորդ շաբաթվա առաջին աշխատանքային օրվանից՝ 10 օրվա ընթացքում եւ հունիսի առաջին աշխատանքային օրվանից՝ 30 օրվա ընթացքում: Ե՛վ հունվարին, եւ՝ հունիսին միասնական քննություններ հանձնած սովորողի ավարտական փաստաթղթում լրացվում է միասնական քննության ավարտական մասի ավելի բարձր դրական գնահատականը: Միեւնույն առարկայից ե՛ւ միասնական, ե՛ւ պետական ավարտական քննություն հանձնելու դեպքում միջնակարգ կրթության ատեստատում լրացվում է միասնական քննության ավարտական մասի գնահատականը (միավորը):*

Ինտելեկտի (մտավոր) խնդիրներով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները կարող են ազատվել գիտելիքի ստուգումից, ավարտական եւ պետական քննություններից:

***ՀԵՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

## Հաստատվել է համատեղ արտադրության կարգավիճակ տրամադրելու կարգը

ՀՀ կառավարության որոշմամբ՝ հաստատվել է համատեղ արտադրության կարգավիճակ տրամադրելու եւ դրա գործողությունը դադարեցնելու կարգը:

Որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է *«Կինեմատոգրաֆիայի մասին»* ՀՀ օրենքի կիրարկման ապահովման, օտարերկրյա ներդրումների համար բարենպաստ պայմանների ստեղծման եւ ոլորտում տնտեսական գործունեության ակտիվացման, հավելյալ եկամուտների գեներացման, համատեղ ֆիլմարտադրության զարգացման, ինչպես նաեւ միջազգային կինոնախագծերի ստեղծման պայմանների հստակեցման եւ իրավակարգավորման հանգամանքներով:

ՀՀ կինեմատոգրաֆիայի ոլորտում համատեղ արտադրությունն իրականացվում է *«Կինեմատոգրաֆիական համատեղ արտադրության մասին»* եվրոպական կոնվենցիայի դրույթներին համապատասխան: Համարտադրող կողմերից յուրաքանչյուրն իր երկրում համատեղ իրականացվող կինոնախագծի համար պետք է ստանա համատեղ արտադրության կարգավիճակը փաստող հավաստագիր: Հավաստագրված համատեղ արտադրության կարգավիճակը նշանակում է պետական որոշակի ֆինանսավորման համար անհրաժեշտ ազգային կարգավիճակի ձեռքբերում եւ ազգային ֆիլմերի համար նախատեսված արտոնություններից օգտվելու հնարավորություն, այդ թվում՝ վարձութային շուկայի ընդլայնում: Նշված կարգավիճակը դեռեւս չի գործում Հայաստանի Հանրապետությունում, սակայն ոլորտի բարեփոխման նպատակով այն սահմանվել է *«Կինեմատոգրաֆիայի մասին»* ՀՀ օրենքով եւ ներկայում ենթակա է կիրարկման: Միաժամանակ, այն ապահովում է համատեղ ֆիլմարտադրության շրջանակում կողմերի համահավասար կարգավիճակի իրավական կողմը: Օրինակ՝ Eurimages-ը, ի թիվս այլ փաստաթղթերի, պահանջում է, որ աջակցվող նախագծերն ունենան համատեղ արտադրության պաշտոնական կարգավիճակ:

Հիմնական արտադրող երկիրը նախ ամբողջությամբ հաստատում է համատեղ արտադրության կարգավիճակը, որին հաջորդում են ֆինանսավորման ավելի փոքր մասնաբաժին ունեցող երկրները: Հիմնական արտադրության երկիրը որոշվում է ֆինանսավորման մասնաբաժնով: Ըստ այդմ՝ համատեղ արտադրության կարգավիճակ տրամադրելու կարգով սահմանվել են միջազգային չափորոշիչներին համապատասխան իրավահարաբերություններ, որոնք կնպաստեն ազգային ֆիլմերի մրցունակության բարձրացմանը, պետական կառավարման մարմինների եւ մասնավոր հատվածի փոխշահավետ ու թափանցիկ համագործակցությանը, ինչպես նաեւ ազգային ֆիլմերի միջազգային տարածմանը:

Համատեղ արտադրության կարգավիճակը տրամադրում եւ այն դադարեցնում է մշակութային հիմնադրամը:

Դրսեկ (էքստեռն)

## Ավարտական քննությունների օրերը

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել է 2024 թվականի 1-ին քննաշրջանի դրսեկության ձեւով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման ու անցկացման աշխատակարգը եւ ժամանակացույցը:

Քննություններն անցկացվելու են **2024 թ փետրվարի 15-ից մինչեւ մարտի 15-ը** ներառյալ:

Հիմնական կրթության վկայական ստանալու համար դրսեկները 2024 թվականի 1-ին քննաշրջանի ընթացքում *«Համաշխարհային պատմություն», «Հայաստանի աշխարհագրություն», «Աշխարհագրություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն»* առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

*«Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ եւ անվտանգ կենսագործունեություն», «Ռուսաց լեզու», «Ռուս գրականություն»* (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար), *«Օտար լեզու»* (*«Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն»*, այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ), *«Գրականություն»* առարկաների քննությունները հանձնում են բանավոր: *«Ֆիզկուլտուրա»* առարկայից հանձնում են ստուգարք (նորմատիվների հանձնում): Քննական հարցատոմսերը կազմում են էքստեռն քննություններ ընդունող դպրոցի համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից, գնահատման 10 բալային համակարգով:

Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար դրսեկները 2024 թվականի 1-ին քննաշրջանի ընթացքում *«Համաշխարհային պատմություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Օտար լեզու»* (*«Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն»*, այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ), *«Ռուսաց լեզու»* առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

Քննական թեստերը կազմում է ԳԹԿ-ն՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

Հիմնական կրթության վկայականում եւ միջնակարգ կրթության ատեստատում ավարտական եւ պետական ավարտական քննական առարկաները գնահատվում են 20 բալային համակարգով, իսկ տարեկան գնահատականները նշանակվում են՝ 20 բալային համակարգից գնահատականները վերածելով 10 բալային համակարգի:

Բանավոր քննությունները գնահատվում են 10 բալային համակարգով եւ համարվում են տարեկան գնահատականներ:

Գնահատականները գրանցելիս գնահատման 20 բալային համակարգից 10 բալային համակարգին անցման համապատասխանությունը կատարվում է համաձայն հետեւյալ սանդղակի՝

8-9 միավոր - 4
10-11 միավոր - 5
12-13 միավոր - 6
14-15 միավոր - 7
16-17 միավոր - 8
18-19 միավոր - 9
20 միավոր - 10

Դրսեկության ձեւով քննությունները դրսեկները հանձնում են՝ համաձայն ժամանակացույցի:

Հավելենք, որ քննություններն անցկացվելու են Երեւանի թիվ 198 ավագ դպրոցում (հասցեն՝ Նոր Նորք վարչական շրջան, 9-րդ զանգված, Վիլնյուսի 13/1):

Մանրամասների համար զանգահարել՝ (091) 19-56-10 եւ (010) 66-72-50 հեռախոսահամարներով:

# Տարեվերջյան հագեցած ասուլիս

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը** հանդես է եկել տարեվերջյան մամուլի ասուլիսով՝ ամփոփելով 2023 թվականին նախարարության համակարգման ոլորտներում իրականացված աշխատանքները:

## Ոլորտային ռազմավարությունների մշակում եւ հաստատում

ԿԳՄՍ նախարարն անցնող տարում իրականացված աշխատանքներից կարեւորել է հատկապես առանձին ոլորտների ռազմավարությունների հաստատումն ու հայեցակարգային աշխատանքները:

*«Նախորդ տարվա վերջին, Ազգային ժողովը հաստատեց «ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը»: Այս տարի արդեն հաստատվեցին գործողությունների ծրագիրն ու այն կոնկրետ քայլերը, որոնց միջոցով իրականացվելու է կրթության ռազմավարությունը: Այս ուղղությամբ ամբողջ տարվա ընթացքում կատարվել է մեծ ծավալի աշխատանք»,-* ասել է Ժաննա Անդրեասյանը:

ԿԳՄՍ նախարարի տեղեկացմամբ՝ հաստատվել են նաեւ մշակույթի եւ սպորտի ոլորտների զարգացման ռազմավարությունները: Նրա խոսքով՝ այս ոլորտներում եւս սահմանվել են հստակ թիրախներ ու գործողությունների պլաններ, որոնց ուղղությամբ աշխատանքներ են տարվել դեռ մինչեւ ռազմավարությունների ընդունումը:

Մյուս կարեւոր աշխատանքը, ըստ Ժաննա Անդրեասյանի, իրականացվել է *«Ակադեմիական քաղաք»* ծրագրի հայեցակարգի հաստատման շուրջ. տարվա ընթացքում ստեղծվել է նաեւ *«Ակադեմիական քաղաք»* հիմնադրամը:

Նախարարն առանձնացրել է նաեւ գիտության զարգացման ռազմավարության մշակումը, որը նախատեսվում է ամբողջացնել արդեն հաջորդ տարվա ընթացքում:

## Օրենսդրական փոփոխություններ եւ լրամշակումներ

ԿԳՄՍ նախարարի տեղեկացմամբ՝ իրականացվել է նաեւ մեծ ծավալի օրենսդրական աշխատանք: Կրթության ոլորտում Ժաննա Անդրեասյանն առանձնացրել է հատկապես *«Մասնագիտական կրթության եւ ուսուցմանե մասին»* ՀՀ օրենքի նախագծի հաստատումը Կառավարության կողմից. *«Սա օրենսդրական տարբեր փոփոխությունների փաթեթ է եւ, անկասկած, հեղափոխական նշանակություն է ունենալու մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտի որակական փոփոխության տեսանկյունից՝ հատկապես աշխատանքի վրա հիմնված ուսուցումն ինստիտուցիոնալ մոտեցում դարձնելու եւ քոլեջներում կրթության որակը շեշտակիորեն բարձրացնելու ուղղությամբ: Միջին մասնագիտական կրթության համակարգում ներդնում ենք մասնագիտական զարգացման եւ վարձատրության բարձրացման նույն սկզբունքները, որոնք կիրառվում են հանրակրթության համակարգում: Եեկող տարվանից այս քաղաքականությունը կգործի. կարգերն արդեն ներկայացված են քննարկման»:*

Օրենսդրական աշխատանքներից նախարարն առանձնացրել է նաեւ *«Թանգարանների մասին»* օրենքի նախագծի մշակումը: *«Սա մի օրենսդրական նախաձեռնություն է, որը ոլորտում երբեւէ չի եղել, եւ որի կարիքն ակնհայտորեն կար: Միջազգային գործընկերների մասնակցությամբ թանգարանների ոլորտը կարգավորող օրենքի նախագիծն արդեն պատրաստ է՝ հաստատվել է Կառավարության կողմից եւ արդեն իսկ Ազգային ժողովում է: Հույս ունեմ՝ եկող տարի այն կհաստատվի, ինչից հետո կքննարկենք թանգարանների աշխատակիցների վարձատրության բարելավման մոտեցումները, որը օրակարգային հարց է»,-* ասել է Ժաննա Անդրեասյանը՝ տեղեկացնելով, որ նմանօրինակ օրենսդրական փոփոխություններ են նախաձեռնվել նաեւ գրադարանների համար:

Նախարարի խոսքով՝ տարվա ընթացքում գրեթե բոլոր ոլորտային օրենքները լրամշակվել են, եւ առկա են բազմաթիվ բարելավումներ, որոնք էականորեն ազդել են կառավարման սկզբունքների վրա:

*«Օրինակ՝ «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» օրենքում արվել են լրամշակումներ եւ փոփոխություններ, որոնք մեր երկրի հակադոպինգային քաղաքականությունը համապատասխանեցրել են միջազգային չափորոշիչներին: Վարում ենք մեր երկրում խոշոր միջազգային մրցաշարեր անցկացնելու քաղաքականություն: Այդ ստանդարտներին համապատասխանությունը նման մրցաշարեր հյուրընկալելու կարեւորագույն նախապայման է»,-* ընդգծել է Ժաննա Անդրեասյանը:

## Կառուցվածքային փոփոխություններ

ԿԳՄՍ նախարարը կարեւորել է նաեւ նախարարության ներսում իրականացված կառուցվածքային բարեփոխումները՝ ընդգծելով, որ 2023 թվականին այս ուղղությամբ եւս զգալի աշխատանքներ են արվել:

*«Փոխել ենք վարչությունների առանձին գործառույթների, պաշտոնների նկարագրերի համակարգը՝ դրանք դարձնելով ավելի համահունչ առկա խնդիրներին: Այս առումով կառանձնացնեի Գիտության կոմիտեի վերակազմակերպումը Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի, որին վերապահվել են նաեւ Բարձրագույն որակավորման կոմիտեի, ինչպես նաեւ նախարարության Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության վարչության գործառույթները: Այսպիսով՝ ունենք ամբողջական ինստիտուցիոնալ համակարգ բարձրագույն կրթության եւ գիտության ոլորտի բարեփոխումներն ու քաղաքականությունը սպասարկելու համար»,-* նշել է նախարարը:

## Ակադեմիական քաղաքի հատակագիծը մշակվում է

Անդրադառնալով *«Ակադեմիական քաղաք»* նախագծին՝ Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ վերջինիս հատակագիծը պատրաստ կլինի եկող տարեսկզբին:

*«Պայմանագրերը կնքված են, եւ ներկայում մշակում ենք ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագիծը, որը պատրաստ կլինի 2024 թվականին: Բովանդակային աշխատանքներ են տարվում նաեւ բուհերի խոշորացման եւ գիտահետազոտական կազմակերպությունների միավորման ուղղությամբ: Մինչեւ փետրվարի 15-ն ընդունում ենք հայեցակարգային առաջարկներ»,-* ընդգծել է նախարարը:

## Կստեղծվի Մշակույթի զարգացման հիմնադրամ

Ժաննա Անդրեասյանը կարեւորել է նաեւ Մշակույթի զարգացման հիմնադրամի ձեւավորումը, որը կգործի 2024 թվականի սկզբից. *«Սա լինելու է մշակույթի ոլորտի հանրահռչակման, նաեւ թանգարանների միասնական կառավարման եւ ոլորտում բազմաթիվ այլ աշխատանքների իրականացման համար շատ կարեւոր կառույց: Արդեն իսկ քննարկել ենք դրա հիմնական գործառույթները եւ անելիքները: Մյուս տարվա սկզբից հիմնադրամը կգործի եւ էական փոփոխություն կբերի մշակույթի ոլորտի կառավարման հարցերում»:*




## Հատուկ ուշադրություն՝ ուսումնական գույքի որակին

ԿԳՄՍ նախարարը նաեւ խոսել է Կառավարության ծրագրից բխող ամենախոշոր միջոցառումների, այդ թվում՝ *«300 դպրոց, 500 մանկապարտեզ»* ծրագրի մասին: Նա նշել է, որ արդեն աշխատանքներն ավարտված են ավելի քան երեք տասնյակ դպրոցներում եւ 120 մանկապարտեզներում: Այժմ աշխատանքներ են ընթանում շուրջ 80 դպրոցներում: Նոր կառուցված բոլոր դպրոցներն ապահովվում են նոր գույքով, որին առանձնակի ուշադրություն է դարձվում՝ կարեւորելով դրա որակական բնութագրիչները:

Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է նաեւ կապիտալ ծախսերի կատարմանը: Նրա խոսքով՝ 2024 թվականի համար ԿԳՄՍ նախարարության բյուջեն կազմելու է 345 մլրդ դրամ. 2023թ. համեմատ՝ 38%-ով ավելի: Եվ այստեղ կապիտալ ծախսերի մասնաբաժինն էական է՝ ավելի քան 120 մլրդ դրամ:

## Արցախից բռնի տեղահանված սովորողների կրթության եւ ուսուցիչների մասնագիտական շարունակության ապահովում

Նախարարի խոսքով՝ Լեռնային Ղարաբաղից մեր հայրենակիցների բռնի տեղահանման հետեւանքով առաջ են եկել մի շարք նոր խնդիրներ, որոնք հրատապ կարգավորման կարիք են ունեցել: Առաջին հերթին առկա է եղել դպրոցահասակ երեխաների կրթության շարունակականության ապահովման խնդիր:

*«Ավելի քան 17 հազար երեխաներ սովորում են ՀՀ դպրոցներում, որոնց համար ապահովվում են անհրաժեշտ դասագրքեր եւ գրենական պիտույքներ: Բոլոր այն երեխաները, որոնք ունեն կրթության առանձնահատուկ պայմանների, հոգեբանների կարիք, մասնագիտական աջակցություն են ստանում: Հաջորդ ուղղությունը ուսանողների կրթության ապահովումն է, եւ շատ արագ՝ հոկտեմբերի 12-ին, Կառավարության որոշմամբ հաստատվեց կրթաթոշակի կարգը, որը հնարավորություն է տվել Լեռնային Ղարաբաղի բուհերում եւ քոլեջներում սովորող ուսանողներին իրենց կրթությունը շարունակել ՀՀ համապատասխան հաստատություններում եւ կրթաթոշակի միջոցով փոխհատուցել նաեւ նրանց ուսման վարձը: Ավելի քան 1800 ուսանողներ իրենց կրթությունը շարունակում են ՀՀ բուհերում եւ ավելի քան 1000 ուսանողներ՝ քոլեջներում եւ ուսումնարաններում»,-* ասել է Ժաննա Անդրեասյանը:

Նախարարն անդրադարձել է նաեւ ԼՂ այն ուսանողներին, որոնք սովորում էին ՀՀ հաստատություններում. *«Նրանց ուսման վարձը վճարվում էր կա՛մ ԼՂ իշխանությունների կողմից, կա՛մ իրենց ընտանիքների, որոնք նույնպես բռնի տեղահանվել են, եւ ֆինանսական աջակցության այդ հնարավորությունն այլեւս չկա: Կառավարության վերջին նիստում ընդունված որոշումը վերաբերում էր այս խմբի ուսման վարձի փոխհատուցմանը. ծրագրի շահառու է դարձել ավելի քան 900 ուսանող: Արդեն իսկ հրապարակվել է հաստատությունների ցանկը, գումարները փոխանցված են բուհերին, քոլեջներին եւ ուսումնարաններին, որպեսզի այս ուսանողների ուսման վարձի համար փոխհատուցումներն արվեն: Այս աշխատանքները մենք շարունակելու ենք, որովհետեւ ընդունված որոշումը վերաբերում է 2023-2024 թթ. ուսումնական տարվա առաջին կիսամյակին: Հաջորդ տարվա փոխհատուցման համար եւս համապատասխան միջոցներ են նախատեսված բյուջեում»:*

Ժաննա Անդրեասյանը կարեւորել է նաեւ մասնագիտական աշխատանքի շարունակության հնարավորությունը ԼՂ-ից բռնի տեղահանված ուսուցիչների համար:

*«Շուրջ 400 ուսուցիչներ՝ ԼՂ-ից բռնի տեղահանված ուսուցիչների 1/3–ը, արդեն աշխատում է ՀՀ կրթական համակարգում: Նրանցից ավելի քան 200-ը գործուղվել են մարզեր, որոնց հատկացվում է աշխատավարձի 30 %-ի չափով հավելավճար: Որոշ մարզերում (Սյունիքում, Վայոց ձորում, ինչպես նաեւ Տավուշի, Գեղարքունիքի մի շարք համայնքներում) բացի հավելավճարից՝ գործուղված ուսուցիչները ստանում են նաեւ ամսական 50.000 դրամ հավելավճար՝ ի լրումն իրենց վարձատրության: Հույս ունեմ, որ մյուսներն էլ իրենց բնակության վայրերը վերջնական հստակեցնելուց հետո մասնագիտական աշխատանքը կշարունակեն դպրոցներում: Մենք սիրով պատրաստ ենք բոլորին ընդգրկել»,-* ընդգծել է նախարարը:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը նաեւ տեղեկացրել է, որ գործուղման նպատակով ուսուցիչները կարող են օգտվել **https://kadrer.emis.am/** հարթակից, որտեղ հասանելի են բոլոր թափուր տեղերը:

***շարունակությունը՝ էջ 9***

# Տարեվերջյան հագեցած ասուլիս

*սկիզբը՝ էջ 8*

## *«Հայոց պատմություն 7»* դասագրքի շուրջ ստեղծված իրավիճակի մասին

Պատասխանելով լրագրողների՝ նոր դասագրքերին եւ, մասնավորապես, *«Հայոց պատմություն 7»* դասագրքի վերաբերյալ հարցին, Ժաննա Անդրեասյանը նշել է, որ ԿԳՄՍ նախարարությունը զբաղվել է այդ խնդրով դեռ մինչեւ հարցերի՝ հանրային տիրույթում բարձրաձայնումը:

*«Եղել են մասնագետներ, որոնք գրավոր նախարարություն են ներկայացրել մասնագիտական դիտարկումներ, որի համար շնորհակալ եմ, քանի որ մասնագիտական կարծիքները մեզ համար շատ կարեւոր են: Նոր դասագրքերն այս տարի առաջին անգամ են մտել դպրոց եւ անցնում են փորձարկման փուլ: Մենք չենք ունեցել դասագրքերի ստեղծման արդյունավետ համակարգ եւ ավանդույթներ, ուստի բնական է, որ նոր դասագրքերը շտկումների, լրամշակման անհրաժեշտություն կարող են ունենալ: Հեղինակային խմբերի առջեւ խնդիր է դրվել, մասնագիտական բոլոր դիտարկումները հաշվի առնելով, պատրաստել ներդիրներ, որոնք արդեն երկրորդ կիսամյակում պետք է տրամադրվեն դպրոցներին՝ դասագրքերին զուգահեռ կիրառելու համար»,-* ասել է նախարարը:

Նրա խոսքով՝ այս ուսումնական տարում 30 նոր դասագիրք է մտել դպրոց, եւ դրանց բոլորի վերաբերյալ ուսումնասիրություններ են արվում, որպեսզի խնդիրները բացահայտվեն, եւ, ըստ անհրաժեշտության, շտկումներ կատարվեն: Նախարարը տեղեկացրել է, որ կոնկրետ *«Հայոց պատմություն»* առարկայի 7-րդ դասարանի դասագրքի շուրջ իրավիճակի քննարկման նպատակով տեղի է ունեցել հանդիպում, որին ներկա են եղել հանրային կամ ոչ հանրային ձեւաչափով մասնագիտական դիտարկում ներկայացրած գիտնականները, ինչպես նաեւ հեղինակն ու գրքի հրատարակությունն իրականացրած կազմակերպության տնօրենը: Նախարարություն հանդիպման գալուց առաջ մասնագետները ԵՊՀ-ում ունեցել են քննարկում, որի ընթացքում ներկայացված դիտարկումների հիմնական մասը հեղինակն ընդունել է, ինչը, ըստ նախարարի, շատ կարեւոր է: Քննարկման ժամանակ պայմանավորվածություն է ձեռքբերվել, որ մասնագետների բոլոր դիտարկումները, դիտողություններն ու առաջարկներն ուսումնասիրվելու են.

*«Հիմա սպասում ենք հեղինակների կողմից ամբողջական անդրադարձի, այսինքն՝ լինելու է մի աղյուսակ, որտեղ ներառվելու են դասագրքի վերաբերյալ հնչած բոլոր դիտարկումները, հեղինակի արձագանքը դրանց՝ ընդունե՞լ է կամ ոչ, եւ հիմնավորումը՝ ինչո՞ւ է ընդունել եւ ինչո՞ւ չի ընդունել: Ընդ որում՝ հիմնավորումները պետք է լինեն մասնագիտական առումով փաստարկված: Մենք պայմանավորվել ենք, որ այդ ամփոփաթերթերը հասանելի կլինեն բոլորին՝ հավաստիանալու, թե հեղինակն ինչպես է արձագանքել այս կամ այն դիտարկմանը: Նախարարությունն այդ փաստաթուղթը կուղարկի երրորդ՝ անկախ փորձագիտական կարծիքի, որպեսզի ունենանք մասնագիտական վերջնական եզրակացություն: Էմոցիաները երբեմն խանգարում են, որպեսզի տեսնենք իրական աշխատանքային գործընթացը. կան նոր դասագրքեր, որոնք, ըստ էության, անցնում են փորձարկում, ի հայտ է գալիս փոփոխությունների կարիք, որը նորմալ աշխատանքային գործընթաց է»,-* նշել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Լրագրողների հետ հարցուպատասխանի ժամանակ նախարարն անդրադարձել է նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիրքորոշմանը՝ *«Հայոց պատմություն 7»* դասագրքի վերաբերյալ՝ ընդգծելով, որ նախարարությունը հարգում է եկեղեցու դիրքորոշումը. *«Կրթության կազմակերպում է պետությունը՝ հաշվի առնելով մասնագիտական կարծիքները եւ առաջնորդվելով կրթությունը կազմակերպելու մանկավարժական արդյունավետ մոտեցմամբ»:*

Ժաննա Անդրեասյանի տեղեկացմամբ՝ նախօրեին Մայր Աթոռի կողմից նախարարությունը ստացել է նամակ, որը, ինչպես մյուս բոլոր մասնագիտական դիտարկումները, կներառվի անկախ փորձագիտական գնահատման ուղարկվող փաստաթղթում:

*«Հայոց պատմություն» առարկայի՝ չափորոշիչներին համապատասխան դասավանդման մոտեցումներն ուղիղ կապված են մեր պետության շահերի, հայրենասեր քաղաքացու դաստիարակության սկզբունքների հետ, եւ այդպիսին է ամբողջ հանրակրթության պետական չափորոշիչը»,-* ասել է Ժաննա Անդրեասյանը:

## Նոր դասագրքերի մրցույթների մասին

Նոր դասագրքերի հրատարակման վերաբերյալ նախարարը նշել է, որ այդ նպատակով տրվել է շուրջ 8 ամիս ժամանակ. մրցույթներն արդեն հայտարարվել են, եւ հայտերը բացվելու են 2024 թ. ապրիլին: Այդ ընթացքում հեղինակային խմբերը հնարավորություն ունեն ներկայացնելու 3-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ եւ 11-րդ դասարանների դասագրքերի համար հայտեր: Մրցույթներ են հայտարարվել նաեւ 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարանների այն առարկաների դասագրքերի համար, որոնք չեն ստեղծվել նախորդ ուսումնական տարում՝ հայտեր չլինելու կամ համապատասխան փորձագիտական երաշխավորություն չստանալու պատճառով:

## Հանրակրթության ոլորտի բարեփոխումների անկախ գնահատականի մասին

Պատասխանելով հարցին, թե ինչպիսի որակական արդյունքներ են ապահովել կրթության բարեփոխումները, Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ նախարարությունը միջազգային գործընկերներից ստացել է Հանրակրթության պետական չափորոշչի փորձարկման անկախ գնահատում, որն առաջիկայում կհրապարակվի:

*«Շուտով ունենալու ենք նաեւ հանրային միջոցառում, որտեղ այդ գնահատումն իրականացրած մեր գործընկերը՝ Համաշխարհային բանկը, ներկայացնելու է հետազոտության արդյունքները: Դրանք փաստում են, որ Տավուշի մարզում, որտեղ ամբողջությամբ փորձարկվել է չափորոշիչը, ունենք որակական արդյունք: Կրթության որակի կարեւոր ցուցանիշը հետեւյալն է՝ քանի տարի է սովորում երեխան, եւ այդքան տարի սովորելուց հետո իր ունեցած կրթական արդյունքը քանի տարվա արդյունքի հետ է համադրելի»,-* ասել է Ժաննա Անդրեասյանը:

Նախարարի խոսքով՝ 2015 թվականին արված նմանօրինակ հետազոտությունները ցույց են տվել, որ մեր երկրում 12 տարի դպրոց հաճախող երեխան 8,3 տարվա կրթական արդյունք ունի, որը կրթական համակարգի ամենակարեւոր եւ լուրջ խնդիրն է: *«Այդ ժամանակը մենք վերցնում ենք մեր երեխաների կյանքից եւ վատնում անհիմաստ: Հենց սա է մեզ ստիպել գնալ այս փոփոխություններին»,-* նշել է Ժաննա Անդրեասյանը՝ ընդգծելով, որ նոր չափորոշչի ներդրումը կրթական իրական արդյունքի եւ դպրոցում անցկացված տարիների տարբերությունն էականորեն կրճատում է:

## Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգության պահպանության մասին

Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ ԿԳՄՍ նախարարությունն ինտենսիվ աշխատում է նաեւ Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգության պահպանության հարցի շուրջ:

*«ԱԳՆ գործընկերների հետ մի ամբողջ գործողությունների պլան ունենք, թե ինչպես ենք իրականացնելու ԼՂ տարածքում մնացած մշակութային ժառանգության պահպանության հարցը»,-* նշել է նա:

Նախարարը հայտնել է, որ ԼՂ տարածքում մնացած նյութական եւ ոչ նյութական մշակութային արժեք ունեցող ժառանգությունը գույքագրվել է, եւ ամբողջացվել է տվյալների բազան. *«Գույքագրում ենք նաեւ վանդալիզմի դեպքերը եւ դրանք ինտեսիվ փոխանցում բոլոր հնարավոր միջազգային գործընկերներին: Էլեկտրոնային շտեմարաններ, կայքեր են ստեղծվում, նախատեսվում են ցուցահանդեսներ, համաժողովներ եւ՝ Հայաստանում, եւ՝ արտերկրի տարբեր հարթակներում»,-* ասել է ԿԳՄՍ նախարարը:

## *«Գոյ»* թատրոնի մասին

Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է նաեւ *«Գոյ»* թատրոնի վերաբերյալ հարցին՝ ընդգծելով, որ այն կգործի Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի կազմում՝ որպես առանձին ստեղծագործական միավոր: Նախարարը նաեւ պարզաբանել է, որ նախօրեին թատրոնի անձնակազմը հանդիպել է ոլորտը համակարգող փոխնախարարի հետ: Ստեղծագործական անձնակազմը շարունակելու է գործունեությունը Սունդուկյանի անվան թատրոնում՝ ներկայացումներն ու խաղացանկն իրականացնելով ակադեմիական բեմում՝ ունենալով ստեղծագործական ազատություն եւ պահպանելով ոճային առանձնահատկությունը:

## Ռուսերենով ուսուցմամբ դասարանների դասագրքերի մասին

ԿԳՄՍ նախարարը, պատասխանելով լրագրողների հարցերին, տեղեկացրել է՝ ՀՀ հանրակրթական դպրոցների՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների դասագրքերի փորձաքննությունն ավարտվել է, եւ գրքերը բաշխվել են դպրոցներին:

*«Փորձաքննությունն ունի շատ պարզ նպատակ. դպրոց մուտք գործող ցանկացած նյութ պետք է փորձաքննված լինի, եւ դա ստանդարտ ընթացակարգ է: Հաշվի առնելով, որ այս տարվանից նոր չափորոշիչը ներդնում ենք ՀՀ դպրոցներում, այն դասագրքերը, որոնք ուղարկված էին ՌԴ-ից, բնականաբար, պետք է անցնեին փորձաքննություն՝ հասկանալու, թե որքանով են համապատասխանում մեր հանրակրթության չափորոշչին»,-* ասել է Ժաննա Անդրեասյանը:

Նախարարի խոսքով՝ ռուսական կողմին առաջարկվել է ռուսերենով ուսուցմամբ դասարաններում դասագրքերի տրամադրումն այսուհետ ապահովել ՀՀ դպրոցներում կիրառվող, ՀՀ կրթական չափորոշիչներին համապատասխանող դասագրքերի՝ ռուսերենով տարբերակների տրամադրմամբ:

*«Համապատասխան աշխատանքային խմբերը պետք է աշխատեն այդ ուղղությամբ, որպեսզի այսպիսի հարցեր հետագայում չառաջանան»,-* եզրափակել է Ժաննա Անդրեասյանը:

## Գիտական հոդվածների տպագրության մասին

Նախարար Ժաննա Անդրեասյանը նշել է, որ գիտական հոդվածների քանակի նվազումը պայմանավորված է դրանց որակի բարելավմամբ:

*«Գիտական ամսագրերի ցանկը եւս լրամշակվել եւ կրճատվել է, որովհետեւ կան որոշակի միջազգային չափանիշներ, որոնց համապատասխանության հարցում պետք է հետեւողական լինենք՝ մրցունակ գիտական ամսագրեր ունենալու համար»,-* ասել է նախարարը:

Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ գիտական կադրերի ատեստավորման նոր կարգի հիմքում դրված է գիտական հոդվածների թիվը, այդ թվում՝ միջազգային գիտական պարբերականներում: Այս մոտեցումը խթանելու է գիտաշխատողների կողմից հոդվածների տպագրումն ու բարձրացնելու է ակտիվ գիտական գործունեությամբ զբաղվելու մոտիվացիան: Ատեստավորման նոր կարգում հաշվի է առնվելու նաեւ գիտաշխատողների՝ կրթական գործընթացում ներգրավվածությունը՝ խրախուսելով բուհերի եւ գիտական հետազոտության կապը:

## Հայաստանում կանցկացվի ԱՊՀ երկրների մանկավարժների համագումարը

Հաջորդ տարվա կարեւոր անելիքներից նախարարն առանձնացրել է *«Մասնագիտական կրթության եւ ուսուցման»* նոր օրենքի ընդունումը, որի շուրջ նախատեսվում են նաեւ հանրային լսումներ:

Հանրակրթության ոլորտում, ըստ նախարարի, կարեւոր է կառավարման նոր մոդելի տեղայնացումը, ըստ որի՝ առանձնացված են տնօրենի եւ վարչատնտեսական մասի համակարգողի գործառույթները. *«Բովանդակային խնդիրների պատասխանատուն դպրոցի տնօրենն է, իսկ վարչատնտեսական մասի համակարգողը պատասխանատու է ֆինանսատնտեսական գործառույթների համար»:*

Ժաննա Անդրեասյանի փոխանցմամբ՝ հաջորդ տարի Հայաստանում անցկացվելու է ԱՊՀ երկրների մանկավարժների համագումարը: Երկու տարին մեկ անցկացվող համաժողովին կմասնակցեն տարբեր երկրների կրթական ոլորտի ներկայացուցիչներ, կկազմակերպվի կրթական փառատոն:

## Ակադեմիական քաղաքի տեղակայման մասին

Պատասխանելով լրագրողի այն հարցին, թե որտեղ է նախատեսվում կառուցել ակադեմիական քաղաքը, նախարարը հստակեցրել է, որ այն կառուցվելու է Երեւանի եւ 3 մարզերի՝ Արմավիրի, Արագածոտնի եւ Կոտայքի, սահմանագծին: Արձագանքելով դիտարկմանը, թե ինչու է ակադեմիական քաղաքը Աշտարակից տեղափոխվել Երեւան, նախարարը նշել է:

*«Այստեղ, ուղղակի, պարզ թյուրըմբռնում կա. ակադեմիական քաղաքի կառուցման մասին խոսելիս նշվել է տեղադրության ամենամոտ հատվածը եւ ըստ այդմ՝ Երեւանի 17-րդ թաղամասին կից տարածքը: Աշտարակի այն տարածքը, որի շուրջ ի սկզբանե ընթացել են քննարկումները, մի քանի անգամ փոքր էր եւ չէր համապատասխանում հայեցակարգին: Հետագա քննարկումների արդյունքում, հաշվի առնելով ակադեմիական քաղաքում տեղակայվող բուհերի թիվն ու բավականին մեծ ենթակառուցվածքները՝ Ազգային ստադիոն, սպորտային ենթակառուցվածքներ, ժամանակակից համերգասրահ եւ այլն, պարզ դարձավ, որ այն շատ ավելի մեծ տարածքի առկայություն էր ենթադրում: Այս նկատառումով էլ ընտրվել է 17-րդ թաղամասին հարակից 630 հա տարածքը, որը հիմնականում պետական եւ համայնքային սեփականություն է»,-* ասել է Ժաննա Անդրեասյանը:

Նախարարի խոսքով՝ ակադեմիական քաղաքը նպատակ ունի զարգացնել նաեւ մարզերի ենթակառուցվածքները, ինչին կնպաստի դրա՝ Հյուսիս-Հարավ մայրուղու հարակից հատվածում տեղակայումը:

Ասուլիսի ընթացքում ԶԼՄ ներկայացուցիչները տարատեսակ հարցեր են ուղղել ԿԳՄՍ նախարարին, որոնց նա պատասխանել է սիրով եւ հանգամանալից:

Կառավարության նիստում

# Մինչեւ 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների ցանկն ավելացել է եւս 12-ով

ՀՀ կառավարության նիստում *«Մինչեւ 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը հաստատելու եւ ցանկում ընդգրկված դպրոցների համար սահմանված շինարարական աշխատանքների՝ կառուցման, վերակառուցման կամ հիմնանորոգման համար միջամտության աստիճանի ընտրության չափորոշիչները սահմանելու մասին»* որոշման մեջ կատարվել են փոփոխություններ եւ լրացումներ:

*«Մինչեւ 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների»* ծրագրում ընդգրկված հաստատությունների ցանկն ավելացել է եւս 12-ով՝ կառուցման եւ վերակառուցման միջամտության աստիճաններով: Դրանք են՝ Երեւանի թիվ 124 հիմնական դպրոց (նախկին *«Երեւանի թիվ 201 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ–ի տեղակայման վայրում), Երեւանի թիվ 64 հիմնական դպրոց, Երեւանի Գ.Գուրզադյանի անվան թիվ 163 հիմնական դպրոց, Երեւանի թիվ 157 հիմնական դպրոց, Երեւանի Ս. Խանզադյանի անվան թիվ 184 ավագ դպրոց, Երեւանի Ա. Երզնկյանի անվան թիվ 118 ավագ դպրոց, Երեւանի Մ. Սարյանի անվան թիվ 86 հիմնական դպրոց, Երեւանի Րաֆֆու անվան թիվ 36 հիմնական դպրոց, Երեւանի Ս. Շահմուրադյանի անվան թիվ 85 հիմնական դպրոց, Երեւանի Վ. Դավթյանի անվան թիվ 37 հիմնական դպրոց, Երեւանի Վ. Վարդեւանյանի անվան թիվ 173 եւ 31 հիմնական դպրոցներ, Վանաձորի Մ. Մաշտոցի անվան թիվ 15 հիմնական դպրոց:



Որոշմամբ փոփոխության են ենթարկվել նաեւ Կոտայքի մարզի Ջրվունի, Պռոշյան եւ Արամուս բնակավայրերի կառուցվող դպրոցներին առնչվող տեղեկությունները: Մասնավորապես՝ Կոտայքի մարզի Ջրվունի եւ Պռոշյան բնակավայրերում, բնակչության թվով պայմանավորված, նոր միջնակարգ դպրոցներ կառուցելու անհրաժեշտություն է առաջացել՝ միաժամանակ գործող դպրոցները պահպանելու միտումով: Նշված հանգամանքը նաեւ կլուծի գործող դպրոցներից երեխաների տեղափոխության հարցերն այն դեպքում, եթե որոշվեր հին դպրոցները վերակառուցել:

Միաժամանակ, որոշմամբ Կոտայքի մարզի Արամուս բնակավայրի նոր կառուցվող դպրոցի հզորությունը 500-ի փոխարեն սահմանվել 800՝ բնակչության թվով պայմանավորված:

Որոշման արդյունքում մինչեւ 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներում ենթակառուցվածքների, շենքային պայմանների բարելավման միջոցով ուսումնական գործընթացի կազմակերպումն ավելի դյուրին կդառնա՝ նպաստելով ուսումնական հաստատություններում կրթության որակի բարձրացմանը:

Կառավարության մեկ այլ որոշմամբ՝ փոփոխություն է կատարվել նաեւ ՀՀ-ում կրթական ծրագրերի եւ նախադպրոցական ծառայության իրականացման լիցենզավորման եւ լիցենզիայի ձեւերը հաստատելու մասին կարգում:

Որոշման ընդունման նպատակն է լիցենզավորման կարգերում նախադպրոցական հաստատությունների համար ուսումնական տարածքի հասարակական նպատակային նշանակության պահանջը հետաձգել մինչեւ 2024 թվականի սեպտեմբերի 30-ը՝ անխոչընդոտ իրականացնելու լիցենզավորման գործընթացը եւ միաժամանակ ապահովելու ուսումնական տարածքների մասով այլ նորմատիվների կատարումը:

Հիշեցնենք՝ ՀՀ-ում գործող կազմակերպությունները՝ հիմնականում զարգացման կենտրոնների անվան տակ (ավելի քան 300), որոնք իրականացնում են նախադպրոցական տարբեր կրթական ծրագրեր (այդ թվում՝ այլընտրանքային) եւ նախադպրոցական ծառայություններ, ինչպես նաեւ հիմնական կրթական ծրագիր իրականացնող նախադպրոցական ուսումնական հաստատությունները պետք է լիցենզավորվեն: Լիցենզավորվելով եւ գործելով լիազոր մարմնի վերահսկողության ներքո՝ կենտրոնները կապահովեն երեխաների առողջության եւ անվտանգության նվազագույն պահանջները (հիգիենիկ եւ սանիտարահամաճարակային, հակահրդեհային անվտանգություն եւ այլն) եւ կրթության բովանդակությամբ ներկայացվող վերջնարդյունքները, որոնք երեխաներին նախապատրաստում են դպրոցին:

***ՀԵՂԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի *«Թավշուտի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի դասվարի (19 դասաժամ), Հայոց եկեղեցու պատմության (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ փետրվարի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***փետրվարի 5-ին՝ ժամը 13:00-ին,*** ՀՀ Շիրակի մարզի Թավշուտի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Աշոցք համայնք, բնակավայր Թավշուտ, փ. 2, շ. 2:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 94-59-45 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի *«Կառնուտի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի զինղեկի (5 դասաժամ), տեխնոլոգիայի (4 դասաժամ), քիմիայի (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ փետրվարի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***փետրվարի 9-ին՝ ժամը 12:00-ին,*** ՀՀ Շիրակի մարզի Կառնուտի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Կառնուտ, Կամոյի խճուղի 12:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 85-84-35 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի *«Գանձաքարի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի երաժշտության (7 դասաժամ), կերպարվեստի (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ փետրվարի 12-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***փետրվարի 15-ին՝ ժամը 12:00-ին,*** ՀՀ Տավուշի մարզի Գանձաքարի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Գանձաքար, փ. 28, շ. 4:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 20-57-07, (093) 99-84-14 հեռախոսահամարներով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի *«Բարձրաշենի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի անգլերենի (23 դասաժամ), ՆԶՊ-ի (5 դասաժամ), ռուսաց լեզվի (18 դասաժամ), կերպարվեստի (8 դասաժամ), երաժշտության (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հունվարի 24-ից մինչեւ փետրվարի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***փետրվարի 8-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Բարձրաշենի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Բարձրաշեն, Մաշտոցի 113:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 85-35-06 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի *«Նահապետավանի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի դասվարի (9 դասաժամ), տեխնոլոգիայի (3 դասաժամ), *«Իմ հայրենիքը»* առարկայի (2 դասաժամ), ինֆորմատիկայի եւ ԹԳՀԳ-ի (7,5 դասաժամ), մաթեմատիկայի (10 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ), երաժշտության (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հունվարի 24-ից մինչեւ փետրվարի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***փետրվարի 12-ին՝ ժամը 15:00-ին,*** ՀՀ Շիրակի մարզի Նահապետավանի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Արթիկ համայնք, բնակավայր Նահապետավան, 3-րդ փ., 2-րդ փակուղի, շ. 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 08-93-04 հեռախոսահամարով:

# Սիրո մե՛ր հովանավորը. Սուրբ Սարգիս զորավար

**Սուրբ Սարգիս** զորավարը իր որդու՝ **Մարտիրոս**ի եւ 14 քաջ մարտիկների հետ նահատակվել է՝ հանուն քրիստոնեական հավատքի:

Արիության համար Սուրբ Սարգիսը Մեծն Կոստանդիանոս կայսեր (285-337) կողմից կարգվում է իշխան եւ սպարապետ՝ Հայաստանին սահմանակից Կապադովկիայում: Նա ոչ միայն գերազանց սպարապետ էր, այլեւ հիանալի քարոզիչ: Օգտվելով կայսեր հոժարությունից՝ իր իշխանության տակ գտնվող քաղաքներում քանդում է մեհյաններ, կառուցում եկեղեցիներ, տարածում քրիստոնեությունը: Երբ Հուլիանոս Ուրացողի թագավորության օրոք (360-363) սկսվում են Քրիստոսի եկեղեցու հալածանքները, Սուրբ Սարգիսը, աստվածային հայտնությամբ հրաման առնելով հեռանալ կայսրության սահմաններից, իր որդի Մարտիրոսի հետ գալիս, ապաստանում է քրիստոնյա Հայաստանում, ուր թագավորում էր Տիրան արքան՝ Մեծն Տրդատի թոռը՝ Խոսրովի որդին: Տեղեկանալով, որ Հուլիանոսը մեծ զորքով շարժվում է Պարսկաստանի վրա, Հայոց արքան, ձգտելով իր երկիրը զերծ պահել հարձակման վտանգից, հորդորում է Սարգսին ծառայության անցնել Շապուհի մոտ:

Շապուհը սիրով ընդունում է Սուրբ Սարգսին եւ նշանակում նրան զորագնդերի հրամանատար: Զորականներից շատերը, տեսնելով փայլուն զորավարի բարեպաշտությունն ու վարքով վկայած նվիրումն առ Աստված, իր աղոթքներով՝ Տիրոջ գործած հրաշքները, հրաժարվում էին հեթանոսությունից եւ դառնում քրիստոնյա: Սակայն Շապուհը պահանջում է նրանից պաշտել կրակը եւ զոհ մատուցել: Զորավարն անմիջապես մերժում է այն՝ ասելով. *«Երկրպագելի է մեկ Աստված՝ Ամենասուրբ Երրորդությունը, Ով ստեղծել է երկինքն ու երկիրը: Իսկ կրակը կամ կուռքերը ի բնե աստվածներ չեն, հողեղեն մարդը դրանք կարող է փչացնել»:* Այդ խոսքերից հետո Սուրբ Սարգիսը կործանում է բագինը: Զայրացած ամբոխը հարձակվում է Սուրբ Սարգսի եւ նրա որդու վրա: Առաջինը նահատակության պսակն ընդունում է նրա որդին՝ Մարտիրոսը: Սուրբ Սարգիսը բանտարկվում է եւ աներեր մնալով իր հավատքի մեջ՝ գլխատվում: Նահատակվելուց հետո Սուրբ Սարգսի մարմնի վրա լույս է ծագում: Քրիստոնեական հավատքի համար նահատակվում են նաեւ Սուրբ Սարգսին հավատարիմ տասնչորս զինվորները: Հավատացյալները նահատակների մարմիններն ամփոփում Համիան քաղաքում:

Սուրբ Մեսրոպ Մաշտոց վարդապետը Սուրբ Սարգսի մասունքները բերում է Կարբի (Աշտարակի շրջան)՝ տեղում կառուցելով երանելու անունը կրող եկեղեցի:

## Առաջավորաց պահք

Սուրբ Սարգսի տոնին նախորդում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից հաստատված **Առաջավորաց պահքը:** Պահքը տեւում է հինգ օր (այս տարի՝ **հունվարի 22-ից 26-ը** ներառյալ):

## Սուրբ Սարգիս. երիտասարդների եւ սիրո բարեխոս

Ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի ուսումնասիրությունների համաձայն՝ Սուրբ Սարգիսը հովանավորել է Սասունցի Դավթին եւ Սասնա բոլոր հերոսներին ոչ միայն ռազմի դաշտում, այլ նաեւ սիրո մեջ:

Սուրբ Սարգիս Զորավարի տոնը Հայաստանում ընդունված է նշել ոչ միայն եկեղեցական ծեսով, աղոթքով, այլեւ ժողովրդական սովորույթներով, որը մեզանում նվիրական ավանդություն է: Սուրբ Սարգիս զորավարը երիտասարդների արագահաս բարեխոսն է: Նրա միջնորդությամբ հրաշքներ են տեղի ունենում: Այդ օրը երիտասարդներն աղոթում են Սրբին, որ իրենց աղոթքները հասցնի առ Աստված: Սուրբ Սարգիսը սիրո երազանքն իրականացնող Սուրբ է:

Սուրբ Սարգսի մասին բազմաթիվ ավանդապատումներ կան: Ահավասիկ դրանցից մեկը:

Աղքատ Աշուղ Ղարիբը սիրում է մի մեծահարուստի աղջկա՝ Շահ-Սանամին: Վերջինս եւս սիրում է նրան, բայց Աշուղն աղքատ էր, եւ աղջկա հայրը արգելում է նրանց ամուսնանալ, քանի որ մտադրված էր նրան կնության տալ մի մեծահարուստի: Աշուղ Ղարիբը որոշում է մեծ կարողություն կուտակելու համար գնալ օտարություն՝ աշխատելու: Սակայն, մինչեւ այդ, Աշուղ Ղարիբն իր սիրած էակից խոստում է առնում՝ յոթ տարի սպասել իրեն: Պայման է դնում, որ եթե ուշանա անգամ մեկ օր, աղջիկը թող ամուսնանա հոր ցանկությամբ:

Այդ յոթ տարիները շատ դժվար են անցնում Աշուղ Ղարիբի համար: Նա զրկված էր իր գեղեցկուհուն տեսնելու հնարավորությունից, որեւէ լուր չուներ նրա մասին, սակայն չէր հուսահատվում, այլ կարոտով սպասում այն օրվան, երբ նրանք կհանդիպեն, ընտանիք կկազմեն եւ ամբողջ կյանքը կապրեն միասին:

Յոթ տարի շարունակ գիշեր ու զօր աշխատելով՝ Աշուղ Ղարիբը կարողություն ստեղծեց եւ տունդարձի ճամփա ընկավ: Ճանապարհը լի էր փորձանքերով եւ խոչընդոտներով: Թվում էր, թե Աշուղ Ղարիբն իր հույսը պետք է կորցնի. չի հասնի իր սիրած էակին: Նա ազնիվ սրտով եւ արդար մտքով աղոթում է Սուրբ Սարգսին՝ հայցելով արագահաս Սրբի օգնությունը:

Սուրբ Սարգիսը, լսելով սիրահարված Աշուղի աղոթքը, իր արագահաս ճերմակ նժույգով բարձրացրած մրրիկի մեջ իսկույն հայտնվում է, Աշուղ Ղարիբին նստեցնում ձիու գավակին եւ մեկ ակնթարթում հասցնում Շահ-Սանամի մոտ: Աղջկա հայրը, տեսնելով Աշուղ Ղարիբի կամքը, կատարված հրաշքը, նրանց անկեղծ սերն եւ նվիրվածությունը, օրհնում է երկուսի միությունը:

Ժողովրդական սովորություններից է նաեւ, երբ Սուրբ Սարգսի տոնին նախորդող գիշերը երիտասարդներն աղի բլիթ են ուտում, որի հետ կապում են իրենց փեսացուի կամ հարսնացուի երազահայտնությունը: Այդ օրը հիշատակելի սովորություններից է փոխինդով մատուցարանը դնել տան տանիքին կամ պատշգամբին եւ սպասել Սուրբ Սարգիս զորավարի ձիու պայտի հետքին: Ըստ ավանդույթի՝ Սուրբ Սարգիսը պետք է հրեշտակների ուղեկցությամբ անցնի եւ ում մատուցարանի մեջ դրված ալյուրի կամ փոխինդի մեջ թողնի իր սպիտակ (մաքրություն, անաղարտություն է խորհրդանշում) ձիու պայտի հետքը, այդ տարի կիրականանա երիտասարդի երազանքը:

Տոնի առթիվ՝ սիրահարված երիտասարդները միմյանց բացիկներ եւ քաղցրավենիք են նվիրում:

**Գարեգին Բ** Ամենայն Հայոց հայրապետի տնօրինությամբ՝ Սուրբ Սարգիս զորավարի տոնը հռչակվել է **Երիտասարդների օրհնության օր:** Այս տարի այն կնշվի **հունվարի 27-ին**: Այդ օրը Սուրբ Սարգիս Զորավարի անունը կրող եկեղեցիներում կմատուցվի Սուրբ Պատարագ, որից հետո կկատարվի երիտասարդների օրհնության կարգ:

Սուրբ Սարգսի տոնի կապակցությամբ, այս տարի եւս, ինչպես ավանդաբար, միջոցառումների ընդարձակ ծրագիր է նախապատրաստել Արարատյան Հայրապետական թեմը:

### Սասունցի Դավթի հանդիպումը Սուրբ Սարգսի հետ

(Քաղվածք *«Սասնա ծռեր»* էպոսից)

Դավիթ էդ տեղեն ետ դարձավ ու գնաց, կայնավ Խանդութ խանումի փանջարի առեչ, ըսեց.

- Խանդութ խանում, ես կերթամ կռիվ:

Քշեց, գնաց, շատ, քիչ՝ Աստված գինա, մեկ էլ տեսավ յառջեւանց թոզ ու դուման կիգա:

Էկավ, տեսավ օր սըփ Սարգիսն է:

Դավիթ գնաց, օր սըփ Սարգսին համբուրեր: Սըփ Սարգիս ըսեց.

- Հանե քո Սըփ Նշան, ես համբուրեմ, նոր դու ընձի համբուրե:

Հանեց Սըփ Նշան, համբուրեց սըփ Սարգիս, էն լէ սըփ Սարգսին համբուրեց:

- Դե գնա,- ըսեց,- Աստված խըտ քըզի էղնի: Ու քշեց ձին:

Քեռի Թորոսիկ մնաց աղոթք էնելու:



## Աղոթք Սուրբ Սարգսի բարեխոսության

Գերագույն պատվի՛
արժանացար՝
Բարեխոսելու
Բանն Աստծո՛ւն,
Աղոթքի՛ ընդունող,
Խնդրանքների՛ կատարող,
Արագահաս
Սո՛ւրբ Սարգիս,
Բարեխո՛ս մեր անձերի
համար ի Քրիստոս:
Նրա՛ն՝ Բարձրյալի՛ն,
վայել է փառք, իշխանություն
եւ պատիվ,
Այժմ եւ միշտ եւ
հավիտյանս հավիտենից,
Ամեն:

## Ըստ Փավստոս Բուզանդի

Բյուզանդական Վաղես կայսրն արիոսական աղանդի հետեւորդ էր եւ հալածում էր քրիստոնյաներին: Դրա համար պատժվում է եւ 378 թվականին սպանվում Աստծուց եղած հրաշքներով: Նրան սպանում են քրիստոնեության համար պայքարած սուրբ նահատակները, որոնց միանում է նաեւ Սուրբ Սարգիսը:














Պարույր Սեւակ - 100









# Հայրեներգության նոր որակ

*Ժամանակի հետ Պարույր Սեւակն ավելի հաստատուն տեղ է գրավում ժողովրդի գիտակցության մեջ: Նրա ծննդյան առաջին հարյուրամյակը հաստատում է նրա ինքնուրույն տեղը հայ պոեզիայի պատմության մեջ: Սույն ուսումնասիրություն էլ պայմանավորված է Սեւակի բանաստեղծական շարքերն ու պոեմները՝ ամբողջ պոեզիան, ժամանակագրական զարգացման մեջ ներկայացնելու անհրաժեշտությամբ:*

Հայրեներգության նոր որակը պայմանավորված է Պարույր Սեւակի ստեղծագործությամբ: Հայրենիքը նրա համար եւս պատմության ու հիշողության գալարափողերի խորքից եկող հոգու ձայն էր՝ վեր ամեն ինչից: Ինքն է խոստովանել. *«Յոթ-ութերորդ դասարանում ես որոշեցի մի չտեսնված գործ կատարել՝ հայ ժողովրդի պատմությունը չափածո շարադրել, եւ սկսեցի լրջորեն գրել: Դրանից հետո համալսարան ընդունվեցի, որ այդ «ազգային սխրագործությունը» իրագործեմ: Բայց, ինչպես եւ պետք էր սպասել, դրանից ոչինչ չստացվեց, եւ ես գրածս այրեցի»* (ԵԺ, 5, 388): Դպրոցական տարիքում այսպիսի սեւեռում կարող էր ունենալ միմիայն ողնուծուծով հայրենիքի զգացողություն ունեցողը: Ընտանեկան զրույցներն ու հայ գրականությունը դեռ օրորոցից հասունացնում էին հայրենասեր ոգիներին: Եթե Սեւակն իրականացներ այդ ծրագիրը, կդառնար երկրերդ Ներսես Շնորհալի, ով համանման մի քայլ արդեն արել էր. հայ մատենագիտության աղբյուրներից օգտվելով՝ ստեղծել էր *«Վիպասանություն»* պոեմը:

Սեւակը հայրենիքի գաղափարական զինվոր էր: Այս տեսակետից կարեւոր է նրա (Ա. Մնացականյանի մասնակցությամբ) բանավեճը տխրահռչակ Զիա Բունիաթովի *«Ադրբեջանը 7-11 դարերում»* (Բաքու, 1965) գրքի դեմ (տես՝ Պատմաբանասիրական հանդես, Ե., 1967, թիվ 1, էջ 177-190): Մասնակցել է ԽՄԿԿ Կենտկոմ հայ մտավորականության նամակի կազմման, ստորագրահավաքին, որ նախատեսված էր 1965-ին՝ հայոց ցեղասպանության նախօրյակին, ԽՍՀՄ բնակչությանը հիշեցնելու այդ ողբերգության մասին եւ թույլատրելու Հայաստանում պատշաճ կարգով նշելու սգո արարողությունը:

